Հավելված N 1
ՀՀ կառավարության 2024 թվականի
նոյեմբերի 15-ի N 1803-Լ որոշման

ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

❖ Ներածություն

1. Ներքին գործերի նախարարության ձևավորմամբ Ոստիկանության կազմակերպաիրավական ձևի, կառավարման մոդելի փոփոխությունն ու ֆունկցիոնալ զարգացումը
2. Մարդկային ռեսուրսների արդյունավետ կառավարում և բարեվարքության ամրապնդում
3. Կրթական միջավայրի բարելավում, Ոստիկանության կադրային պատրաստում, մասնագիտական զարգացում
4. Պարեկային ծառայության զարգացում՝ որպես արտաքին ծառայության նոր և ժամանակակից մոդել
5. Հանրապետական մեկ միասնական օպերատիվ կառավարման կենտրոնի (112) ստեղծում
6. Քրեական ոստիկանության զարգացում, օպերատիվ աշխատանքի արդյունավետություն
7. Համայնքային ոստիկանության վերաիմաստավորում
8. Ոստիկանության զորքերի վերափոխում, Ոստիկանության գվարդիայի ձևավորում
9. Մարդու իրավունքների պաշտպանության զգայուն հարցեր
10. Բարեփոխումների իրականացման ներառականություն, գործողությունների մշտադիտարկում և համակարգում
11. Հանրային ընկալում, ռազմավարական հաղորդակցություն
12. Ոստիկանության բարեփոխումների շրջանակներում միջազգային համագործակցություն
13. Ռազմավարության իրագործման ռիսկերը և դրանց հասցեագրումը
14. Ռազմավարության ֆինանսական ամփոփ գնահատականը

❖ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թ. ապրիլի 23-ի N 638-Լ որոշմամբ ընդունվեցին Ոստիկանության բարեփոխումների ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022 թթ. գործողությունների ծրագիրը (այսուհետ նաև՝ 2020-2022 թթ. ռազմավարություն):

2. 2020-2022 թթ. ռազմավարության մոնիթորինգը և առաջընթացն ապահովելու, ինչպես նաև պատշաճ համակարգումն իրականացնելու նպատակով ՀՀ վարչապետի գլխավորությամբ ձևավորվեց նաև Ոստիկանության բարեփոխումների ընթացքը համակարգող խորհուրդ, որի աշխատանքները կազմակերպվում էին ներառական ձևաչափով, և խորհրդի կազմում ներգրավված էին ինչպես պետական կառավարման համակարգի մարմինների և Ազգային ժողովի, այնպես էլ մրցութային կարգով ընտրված քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ:

3. 2020-2022 թթ. ռազմավարության հիմնական թիրախային ուղղություններն էին՝ Ոստիկանության ծառայության հանդեպ վստահության բարձրացումը, Ոստիկանության կառուցվածքային մոդելի փոփոխությունը, ոլորտի քաղաքականության մշակման ու իրականացման գործառույթներով օժտված հաշվետու մարմնի ստեղծումը, Պարեկային ծառայության և Օպերատիվ կառավարման կենտրոնի ներդրումը, Ոստիկանության զորքերի, Համայնքային և Քրեական ոստիկանությունների վերահիմաստավորումն ու զարգացումը:

4. Միջազգային և հայաստանյան կազմակերպությունների կողմից իրականացված հանրային հարցումների արդյունքներով ակնհայտ էր, որ մեկնարկած բարեփոխումների հանդեպ հանրային և միջազգային հետաքրքրությունը բավական մեծ է, ինչը ոգևորող ու միաժամանակ պարտավորեցնող էր բարեփոխումների ակունքներում կանգնած ամբողջ համակարգի համար:

5. Բարեփոխումների հավակնոտ ծրագրի իրականացման արդյունքներով պայմանավորված՝ հասարակությունը՝ որպես բարեփոխումների շահառու, ձևավորեց իրական փոփոխությունների սպասում և պահանջ, ինչը լրացուցիչ խթան էր ապահովելու բարեփոխումների ծրագրերի հետևողական իրականացումը և շարունակելու համակարգի գործունեության տարբեր ուղղությունների լավարկմանը և կարողությունների հետագա հզորացմանն ուղղված նոր գործողությունների ծրագրումը:

6. 2020-2022 թթ. ռազմավարությունը հավակնոտ և մասշտաբային փաստաթուղթ էր, և չնայած համավարակով և Ադրբեջանի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված պատերազմով պայմանավորված օբյեկտիվ դժվարություններին, այնուամենայնիվ, առաջնային համարվող մի շարք միջոցառումների իրականացման առումով արձանագրվեցին էական հաջողություններ: Խոսքը, մասնավորապես, վերաբերում

է Ներքին գործերի նախարարության ստեղծմանը, ոստիկանական արտաքին ծառայության նոր ու ժամանակակից մոդելի՝ Պարեկային ծառայության, ինչպես նաև այս ծառայության գործունեությանն օժանդակող Օպերատիվ կառավարման կենտրոնի հանրապետության ամբողջ տարածքում ներդրմանը, ոստիկանական կրթության ոլորտում կադրերի պատրաստման նոր ձևաչափի ներդրմանը՝ Պարեկային ծառայության ներդրման համատեքստում:

7. 2020-2022 թթ. ռազմավարության առանցքային ձեռքբերումներից էր Ներքին գործերի նախարարության ստեղծումը, որը դարձավ ժողովրդավարական պետությանը բնորոշ, քաղաքացիական վերահսկողություն իրականացնող և քաղաքական պատասխանատվություն կրող՝ գործադիր մարմնի մաս: Նախարարության ստեղծման առաջնային նպատակներից էր Ոստիկանության գործունեության ոլորտում քաղաքականության մշակման և իրականացման գործառույթների միջև հստակ դերաբաշխման ապահովումը, ինչի արդյունավետ իրացումը երաշխավորվեց նաև Նախարարության՝ որպես քաղաքականություն մշակողի, ստեղծման գործընթացում Նախարարության ու Ոստիկանության հարաբերակցության անհրաժեշտ հավասարակշռության ապահովմամբ:

8. Նախարարության հիմնումը ձևավորեց նոր մոտեցումներ Հայաստանում Ոստիկանության բարեփոխման լիարժեք իրագործման համատեքստում, և Նախարարությունը՝ որպես ոլորտի լիազոր մարմին և ոլորտային բարեփոխումների տրամաբանական առաջնորդ, կշարունակի ապահովել Ոստիկանության բարեփոխումների պլանավորման ու իմպլեմենտացման աշխատանքները:

9. Ոստիկանության պրակտիկայում աննախադեպ և օրինակելի փորձ էր նաև պարեկների ընտրության մրցութային կարգը՝ բոլոր դերակատարների ներգրավմամբ, որին հաջորդեց միջազգային լավագույն փորձին համապատասխանող կրթական ծրագրի վրա հիմնված 5-ամսյա ուսուցումը:

10. 2020-2022 թթ. ռազմավարության իմպլեմենտացման արդյունքում գրանցված ձեռքբերումներից էին նաև Ոստիկանության կադրերի պատրաստման նոր կրթական մեթոդաբանության մշակումն ու փորձարկումը Պարեկային ծառայության օրինակով: Որպես հաջողված փորձ՝ Պարեկային ծառայության ուսուցման ծրագրերը, մեթոդաբանությունը, կիրառված մոտեցումները, այդ թվում՝ կապված գործնական և տեսական դասընթացների սահուն համադրման հետ, կծառայեն որպես հիմք ոստիկանական կրթության հետագա զարգացման և կատարելագործման համար:

11. Ոստիկանության ընդհանուր կառուցվածքում Համայնքային ոստիկանության դերակատարության ճիշտ և նպատակային տեղորոշման համատեքստում էական էր համապարփակ աուդիտի իրականացումը: Համայնքային ոստիկանության վերափոխումն այժմ ընթացքի մեջ է. արդեն հստակեցվել են ծառայության գործառույթների օպտիմալ շրջանակը, ծառայության կազմակերպման, ղեկավարման ձևը, համայնքի հետ հաղորդակցության նախընտրելի ձևաչափերը, կառուցվածքը, ինչպես նաև Ոստիկանության տարածքային այլ ծառայությունների հետ հարաբերակցության տեսլականը:

12. Քրեական ոստիկանության կարողությունների նպատակային օգտագործման տեսանկյունից հանցավորության կանխման և բացահայտման ուղղությամբ նախաձեռնվեց նաև նոր Քրեական ոստիկանության գործարկումը: Միջազգային լավագույն փորձի և իրավակիրառ պրակտիկայի խնդիրների վերլուծությունը հնարավորություն տվեց հստակ պատկերացնել, թե հատկապես լիազորությունների ինչպիսի շրջանակով պետք է օժտված լինի ծառայությունը: Քրեադատավարական գործող օրենսդրության լույսի ներքո ակնհայտ դարձավ նաև այն, որ իրատեսական չեն ՆԳՆ ոստիկանության համակարգում նախաքննական գործառույթների համակցումը օպերատիվ-հետախուզական գործունեության հետ և Ոստիկանությունում դետեկտիվի ինստիտուտի ներդրումը:

13. Ոստիկանության վերջին հենասյան՝ Գվարդիայի ձևավորման համար 2020-2022 թթ. ռազմավարության շրջանակներում համալիր ուսումնասիրությունների արդյունքում մշակվեց հայեցակարգ: Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ Ոստիկանության զորքերի և դրա կազմում ծառայողների երկակի կարգավիճակը և ծառայության ներքին ու արտաքին անվտանգության գործառույթների զուգակցումը չեն բխում Ոստիկանության ընդհանուր խնդիրներից: Նշվածով պայմանավորված՝ որպես առավել արդյունավետ մոդել, ընտրվել է հասարակական կարգի պահպանության և հասարակական անվտանգության ապահովման զուտ ոստիկանական մասնագիտացված ծառայության ստեղծումը, որի վերջնական գործարկմանն ուղղված միջոցառումները կիրականացվեն արդեն ռազմավարական նոր փաստաթղթի շրջանակներում:

14. 2020-2022 թթ. ռազմավարությամբ նախատեսված հիմնական գործողությունների իրականացումն անմիջականորեն իր ազդեցությունն ունեցավ հասարակության բոլոր շերտերի վրա՝ ապահովելով հասարակական անվտանգ միջավայրի մակարդակի զգալի բարձրացում, ինչն էլ իր հերթին ապահովեց Ոստիկանության նկատմամբ հանրային վստահության զգալի աճը: Այսպես, Միջազգային հանրապետական ինստիտուտի (IRI) նախաձեռնությամբ կատարված Հանրային կարծիքի ուսումնասիրությանը նվիրված հետազոտությամբ արձանագրվել է, որ Ոստիկանության աշխատանքից գոհունակության ցուցանիշը 62 տոկոս է (գրանցվել է 4 տոկոս աճ), իսկ ԵԱՀԿ-ի կողմից պատվիրակված հարցման արդյունքներով պարզվել է, որ հարցվածների 72 տոկոսը վստահում է Ոստիկանությանը կամ ունի չեզոք դիրքորոշում: Այս համատեքստում, հիմքում ունենալով արդեն իսկ մեկնարկած բարեփոխումները իրատեսական ու շոշափելի դարձնելու տեսլականը, Ներքին գործերի նախարարությունը ձեռնամուխ եղավ ռազմավարական նոր փաստաթղթերի մշակմանը, որոնք կամրագրեն ոլորտային համապարփակ քաղաքականության առաջնահերթություններն առաջիկա երեք տարիների համար:

15. Ոստիկանության բարեփոխումների իրականացման նոր ռազմավարության (այսուհետ՝ ռազմավարություն) և դրանից բխող գործողությունների ծրագրի մշակման գործընթացն իրականացվել է համապարփակ ու ներառական եղանակով, ներգրավված բոլոր դերակատարների հետ ակտիվ քննարկումների միջոցով:

16. Նոր ռազմավարության մշակման համար հիմք են հանդիսացել ինչպես նախորդ ռազմավարության շրջանակներում արձանագրած հաջողությունները և նվաճումները, այնպես էլ բարեփոխումների իրականացման ընթացքում քաղած դասերը, դեռևս ընթացքի մեջ գտնվող և չիրականացված բարեփոխումների ծրագրային կետերը և արդիականություն ձեռք բերած այլ առաջնահերթություններն ու մարտահրավերները: Նախորդ ռազմավարության արդյունքների դիտարկման ու արդիական խնդիրները նոր ռազմավարությամբ հասցեագրելու համատեքստում ուսումնասիրվել են նաև ռազմավարության և դրանից բխող գործողությունների ծրագրի իրականացման անկախ փորձագիտական գնահատումը, Մարդու իրավունքների պաշտպանի, Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակի և այլ պետական մարմինների կողմից բարձրացված խնդիրներն ու ներկայացված առաջարկությունները, ինչպես նաև մարդու իրավունքների և միջազգային այլ մոնիթորինգային մարմինների կողմից, այդ թվում՝ Եվրոպայի խորհրդի կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի (ԳՐԵԿՈ), խոշտանգումների դեմ հանձնաժողովի, մարդու իրավունքների հանձնաժողովի, ռասայական խտրականության վերացման հարցերով կոմիտեի, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների հանձնաժողովի, կանանց հանդեպ խտրականության վերացման հարցերով կոմիտեի, ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհրդի, մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի փորձագետների խմբի (GRETA), Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի (CPT), ՀՀ-ին տրված առաջարկություններն ու հանձնարարականները:

17. Նոր ռազմավարության մշակման նախապատրաստական փուլում նախադեպը չունեցող ձևաչափով ֆոկուս խմբային քննարկումներ են կազմակերպվել շուրջ երկու տասնյակ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ, որոնց շրջանակներում ռազմավարական յուրաքանչյուր ուղղությամբ հավաքագրվել են քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների առաջարկությունները: Ֆոկուս խմբային քննարկումների արդյունքում ներկայացված առաջարկությունները ծառայել են որպես ուղեցույց ռազմավարության հիմնական ուղղությունների մշակման համատեքստում:

18. Նոր ռազմավարությունն ուղղված է Ներքին գործերի նախարարության վերջնական կայացմանը, մեկնարկած բարեփոխումներն ինստիտուցիոնալ հիմքերի վրա դնելուն ուղղված քայլերի շարունակականության ապահովմանը, ոստիկանական համակարգի բոլոր ստորաբաժանումների համար Ոստիկանության նոր նկարագրի ամրապնդմանը և դրա ամբողջականության ապահովմանը, մատուցվող ծառայությունների բարելավմանը, Նախարարության և Ոստիկանության միջև ինստիտուցիոնալ արդյունավետ կապի ապահովմանը, ինչպես նաև Ոստիկանության նոր ֆունկցիոնալը և կառավարումն ավարտական տեսքի բերելուն ու մարդկային ռեսուրսների կառավարման նոր համակարգ ներդնելուն: Ռազմավարությամբ նախատեսվող բարեփոխումները համապարփակ և

համընդգրկուն են և նպատակ ունեն նաև ապահովել ՆԳՆ ոստիկանության գործունեության միասնականացում և ստանդարտավորում՝ ինչպես արտաքին տեսքի, այնպես էլ Ոստիկանության տարբեր ստորաբաժանումների ֆունկցիոնալի ներդաշնակեցման տեսանկյունից:

19. Հատկանշական է, որ նոր ռազմավարության մշակումը ու իրագործումն արդեն իրականացվում է լիազոր մարմնի՝ Ներքին գործերի նախարարության կողմից, որի քաղաքական առաջնորդության ներքո մեկնարկած բարեփոխումներն ավարտին հասցնելու անհրաժեշտությամբ պայմանավորված մշակվել է սույն ռազմավարական փաստաթուղթը:

20. Սույն ռազմավարության հենասյունային բաղադրիչներն են՝

1) **ոստիկանության ֆունկցիոնալի լավարկումը** (նորացված կառուցվածք, աշխատատեղերի նորացված նկարագրություններ, անհրաժեշտ օրենսդրական փոփոխություններ՝ եզակի, չկրկնվող գործառույթների երաշխավորման և դրանց պատշաճ իրականացման գործիքակազմի նախատեսման համար).

2) **ոստիկանական ծառայության լավարկումը** (մարդկային ռեսուրսների կառավարում, այդ թվում՝ կանանց ներգրավում, որակյալ կրթություն, բարեվարքություն, անձնակազմի ֆինանսական և ոչ ֆինանսական մոտիվացիոն բաղադրիչ).

3) **ոստիկանական ենթակառուցվածքի, տեխնիկական հագեցվածության լավարկումը** (շենքերի, շինությունների տեխնիկական և դիզայնի ստանդարտների հաստատում, տրանսպորտային միջոցներով ապահովում, դրանց բաշխում, տեխնիկական և դիզայնի ստանդարտի հաստատում, կապի միջոցների, համազգեստի ապահովում, թվայնացում):

21. Ստորև մանրամասն կներկայացվեն յուրաքանչյուր հենասյունային բաղադրիչի ուղղությունները և դրանց շրջանակներում ծրագրված բարեփոխումները:

1. ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՄԲ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱՒՐԱՎԱԿԱՆ ՁԵՎԻ, ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄՈԴԵԼԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

1.1. Ներքին գործերի նախարարության ձևավորման ազդեցությունը Ոստիկանության վրա

22. Ոստիկանության պատշաճ գործունեության և իր առջև դրված խնդիրների լիակատար լուծման համար անհրաժեշտ նախապայման է ռազմավարական առումով պետական կառավարման համակարգում ճիշտ տեղակայվածությունը, այնպիսի կառուցվածքը, որը լիազորությունների տարանջատման արդյունքում թույլ կտա ոստիկանությանը ռեսուրսներն ամբողջովին ուղղել իր հիմնական գործառույթների իրականացմանը:

23. Նման կառուցվածք և գործունեության սխեմա երաշխավորելու տեսանկյունից Ոստիկանության բարեփոխումների օրակարգում թերևս կենտրոնական դիրք է

զբաղեցրել Ոստիկանության ոլորտի քաղաքականություն մշակող և իրականացնող, հաշվետվողականության ու քաղաքացիական վերահսկողության մեխանիզմներ ունեցող գործադիր իշխանության մարմնի ստեղծումը, ինչպես նաև Ոստիկանության ծառայության կառուցվածքային ու գործառութային վերանայումը՝ ըստ բարեփոխումների հիմնական ուղղություններով իրականացվելիք փոփոխությունների:

24. Նախորդ 2020-2022 թթ. ռազմավարության խոշոր ձեռքբերումներից մեկը հենց ժողովրդավարական պետությանն ու հասարակարգին բնորոշ գործադիր իշխանության մարմնի՝ Ներքին գործերի նախարարության ստեղծումն էր:

25. Կարևոր է, որ Նախարարության ստեղծման նախադրյալները դրվել են այնպես, որ այն լինի նոր կառույց, ընդ որում՝ ոչ միայն իրավաբանորեն թղթի վրա, ոչ միայն նոր խաղացող հայաստանյան անվտանգային լանդշաֆտում, այլև կոնցեպտուալ առումով նոր: Ուստի պատահական չէ, որ միջազգային փորձագիտական գնահատականներով սա համարվում է Հայաստանի կառավարության ամենամեծ նվաճումը: Այս նվաճմամբ ոլորտային բարեփոխումները ձեռք են բերել նաև տրամաբանական առաջնորդ մարմին:

26. Ներքին գործերի նախարարությունը ստեղծվել է օրենքի ուժով 2022 թվականի դեկտեմբերի 30-ին: 2023 թվականի ողջ ընթացքում ձեռնարկվել են անհրաժեշտ միջոցներ Նախարարության պրակտիկ ձևավորման և գործունեության ծավալման համար: Չնայած ահռելի կառուցվածքային և գործառնական փոփոխություններին՝ հանրությանը մատուցվող ծառայությունների որևէ խափանում չի եղել:

27. Նախարարության ձևավորմամբ՝

1) լուծարվել է Արտակարգ իրավիճակների նախարարությունը և դա այն տրամաբանությամբ, որ արտակարգ կամ ճգնաժամային այլ իրավիճակների պայմաններում Հայաստանի Հանրապետությունում պետք է ապահովվի մեկ կետից կառավարում, մեկ կետից քաղաքականության մշակում, որը թույլ կտա ապահովել փոխլրացնող արձագանք, բարձրացնել նաև երկրի դիմակայունությունը: Ըստ այդմ՝ Նախարարությունն իր տանիքի ներքո միավորում է 3 կառույց՝ Ոստիկանությունը, Փրկարար ծառայությունը, Միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը.

2) սոցիալական բնույթ ունեցող գործառույթներն արդեն իսկ տեղափոխվել են Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն: Զուգահեռաբար ընթանում են աշխատանքներ բժշկական սպասարկման ոլորտի գործառույթները Առողջապահության նախարարությանը վերապահելու ուղղությամբ.

3) ոչ ոստիկանական գործառույթները (հատկապես պետության կողմից մատուցվող հանրային ծառայությունները[1], աջակցող ֆունկցիոնալը[2]) քաղաքացիական ծառայության մատուցման ձևով տեղափոխվել են Նախարարության տիրույթ (տե՛ս

[1] Օրինակ՝ վարորդական իրավունքի վկայականների տրամադրման, տրանսպորտային միջոցների գրանցման, դրանց հաշվառման համարանիշների տրամադրման, անձնագրային և վիզաների տրամադրման հետ կապված գործառույթները:

[2] Օրինակ՝ ֆինանսաբյուջետային պլանավորում, գնումների իրականացում, իրավաբանական սպասարկում, կապի ապահովում և այլն:

Աղյուսակ 1-ը)՝ Ոստիկանության զարգացումն ապահովելով որպես մասնագիտացված կառույցի և այդպիսով վերջինիս թողնելով զուտ ոստիկանական գործառույթների իրականացումը.

4) Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության միգրացիոն ծառայությունը Ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչության հետ միավորմամբ կենտրոնացվել է ոլորտի քաղաքականություն մշակող մեկ կառույցի՝ Ներքին գործերի նախարարության ներքո քաղաքացիական բնույթի ծառայության ձևով՝ ինտեգրված մոտեցում ցուցաբերելով միգրացիոն շղթայի բոլոր բաղադրիչների կառավարման նկատմամբ: Ռազմավարական այս քայլն անհրաժեշտ նախադրյալներ է ապահովում նաև միգրացիայի արդյունավետ կառավարման համար: Ընդ որում՝ խոսքը բովանդակային և մեթոդաբանական առումով նոր՝ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության մասին է, որի կադրային կազմը ձևավորվել է բացառապես միջազգային ստանդարտներին համապատասխան կրթական խողովակով անցնելու և այն հաջողությամբ ավարտելու պայմանով: Ներկայում իրականացվում է այս ոլորտում մատուցվող մի շարք ծառայությունները պետություն-մասնավոր գործընկերություն ձևաչափով կազմակերպելու գործընթացը, որը թույլ կտա հանրային ծառայությունների մատուցման ոլորտում ապահովել նոր նշաձող, երաշխավորել բիոմետրիկ տվյալների անվտանգությունը.

5) Նախարարությանն անհրաժեշտ անձնակազմի վերագնահատում է իրականացվել, որի արդյունքներով Նախարարությանը հատկացվող հաստիքների թիվը, ի տարբերություն մինչև ձևավորումը առկա թվի, օպտիմալացվել է 629 հաստիքային միավորով.

6) Նախարարության ամբողջ անձնակազմը համալրվել է մրցութային ձևաչափով՝ հասարակական կազմակերպությունների ներգրավմամբ:

Աղյուսակ 1

ՆԳՆ ֆունկցիոնալ-կառուցվածքային քարտեզ

Հիմնական ֆունկցիաներ	Հասարակական կարգի պահպանություն, հանցագործությունների կանխում, բացահայտում	Աղետների ռիսկի կառավարում	Միգրացիա և քաղաքացիություն	Պետական ռեզերվների կառավարում	Հումանիտար հարցեր

ՆԳՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

- Ռազմավարական պլան., քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչություն
- Ծառայությունների մատուցման որակի վերահսկողության վարչություն
- Ներքին անվտանգության և հակակոռուպցիոն վարչություն
- Աղետների և արտակարգ այլ իրավիճակների կառավարման վարչություն
- Հաշվառման-քննական ծառայությունների մատուցման, թույլտվ. և լիցենզ. վարչություն
- Միջազգային համագործակցության վարչություն
- Իրավաբանական վարչություն
- Մարդկային ռեսուրսների կառավարման վարչություն
- Հանրային հաղորդակցության և իրազեկման վարչություն
- Ֆինանսաբյուջետային վարչություն
- Փաստաթղթաշրջանառության ապահովման վարչություն
- Տեղեկատվական տեխնոլոգիաների և կապի վարչություն
- Տնտեսական վարչություն
- Զորահավաքային և քաղաքացիական պաշտպանության վարչություն

Ծառայություններ

- **Ոստիկանություն**
- **Փրկարար ծառայություն**
- **Միգրացիայի և քաղաքացիության ծառայություն**

* ՆԳՆ կառուցվածքում նշված վարչությունները սպասարկում են նաև ծառայություններին, այսինքն՝ Ծառայություններում այդպիսի վարչությունները կրճատված են, գործառույթները կենտրոնացված եղանակով իրականացվում են մեկ կետից

28. Այսպիսով, կազմակերպաիրավական ձևի առումով Ոստիկանությունը հանդես է գալիս որպես քաղաքացիական նախարարության վերահսկողության ներքո գործող ենթակա կառույց: Այս մեխանիզմի ուժով Ոստիկանությունը ձեռք է բերում իր գործունեության համար քաղաքական պատասխանատու՝ ի դեմս Ներքին գործերի նախարարի, իսկ Ոստիկանության ամենօրյա ծառայողական գործունեության պատասխանատվությունը կրում է Ոստիկանության պետը:

29. Ներքին գործերի նախարարության և Ոստիկանության հարաբերակցության, նրանց միջև հակակշիռների և զսպումների մեխանիզմների նուրբ ընտրությունից է կախված երկու կառույցների գործունեության արդյունավետությունը, որը, մի կողմից անօգտակար կախվածության մեջ չի դնի Ոստիկանության պետին Ներքին գործերի նախարարից, իսկ մյուս կողմից՝ չի կտրի քաղաքականության մշակողի և իրականացնողի տրամաբանական և անհրաժեշտ կապը: Ուստի, Ներքին գործերի նախարարության ստեղծման օրենսդրական փաթեթով իրավական ճարտարապետությունն այնպես է գծագրվել, որ գտնվել են Նախարարություն-Ոստիկանություն հարաբերակցության իրավական և գործնական անհրաժեշտ հավասարակշռությունն ապահովող լուծումները:

30. Կազմակերպաիրավական ձևի համատեքստում կարևոր է անդրադառնալ նաև Ոստիկանության ղեկավարման մոդելին: Անդրադառնալով Ոստիկանության ղեկավարման կենտրոնացված կամ ապակենտրոնացված ձևերի ընտրությանը՝ անհրաժեշտ է նշել, որ այս հարցում միջազգայնորեն ընդունված միասնական չափանիշ չկա: Հետևաբար, պետություններն իրենք են ընտրում, թե ինչպես կազմակերպել իրենց ազգային ոստիկանության ղեկավարումը՝ հիմք ընդունելով ինչպես վարչատարածքային, գործառնական, այնպես էլ ընդհանուր իրավական համակարգի և պետության կառավարման ձևի առանձնահատկությունները: Հայաստանի Հանրապետության տարածքի առանձնահատկությամբ, ինչպես նաև Ոստիկանության համակարգում օպերատիվ որոշումների կայացումն ապահովելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ ընդունելի է համարվել կենտրոնացված ղեկավարման ձևի պահպանումը:

31. Գործունեության արդյունավետության տեսանկյունից ռազմավարական միջոցառումներն իրականացվել են այն հաշվառմամբ, որ ծառայության արդյունավետության գնահատման ժամանակակից մեթոդների[3] օգտագործմամբ պետք է իրականացվի Ոստիկանության ընդհանուր կառուցվածքի արդյունավետության աուդիտ, որն, ի թիվս այլնի, հնարավորություն կտա փաստերի վրա հիմնված պլանավորել Ոստիկանության ներքին կառուցվածքի փոփոխությունները, ներառյալ՝ վերանայել մարզային ստորաբաժանումների և դրանց կազմի մեջ մտնող կառուցվածքային միավորների պահպանման անհրաժեշտությունը: Ըստ այդմ՝ գծագրվել և Ոստիկանության բարեփոխումները համակարգող խորհրդի կողմից հավանության է արժանացել Ոստիկանության նոր կառուցվածքը, որը բացառում է գործառութային կրկնությունը, հաստատվել է նոր

[3] Օրինակ՝ SWOT վերլուծություն, որը գնահատում է ինստիտուտի ուժեղ և թույլ կողմերը, հնարավորություններն ու ռիսկերը:

կանոնադրությունը: Կառուցվածքային վերափոխման շրջանակներում Ոստիկանությունը զարգանալու է որպես մասնագիտացված կառույց 4 հենասյունային ուղղություններով՝ Պարեկային ծառայություն, Քրեական ոստիկանություն, Համայնքային ոստիկանություն և Ոստիկանության գվարդիա:

1.2. Ներքին գործերի նախարարության կայացումն ու Ոստիկանության զարգացումը՝ որպես քաղաքացիական նախարարության ենթակայությամբ գործող կառույցի

32. Ներքին գործերի նախարարության ինստիտուցիոնալ զարգացումն ապահովելու տեսանկյունից, ի թիվս այլնի, հետևողականորեն պետք է՝

1) կատարելագործել Նախարարության ամբողջ անձնակազմի կարողությունները, որը թույլ կտա ինստիտուցիոնալ ճանապարհով ապահովել ոլորտային բարեփոխումների կայունությունն ու Նախարարության պարբերական կատարելագործումը: Այս ուղղությամբ Նախարարության ձևավորման հենց սկզբից մեծ է եղել միջազգային գործընկերների հետ սերտ համագործակցությունն ու աջակցությունը: Շարունակելով աջակցել Ոստիկանության ոլորտի բարեփոխումներին՝ ի աջակցություն Ներքին գործերի նախարարության կարողությունների զարգացման՝ մեկնարկել և ընթանում է Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Աջակցություն Հայաստանում իրավապահ մարմինների և անվտանգության ոլորտի բարեփոխումներին» երկամյա ծրագիրը.

2) իրականացնել Նախարարության կողմից մատուցվող հանրային ծառայությունների բիզնես պրոցեսների պարզեցում ու թվայնացում, ներդնել որակի վերահսկողության գործիքներ և նոր մեթոդաբանություն՝ ծառայությունների մատուցման միասնական ստանդարտներին համապատասխան.

3) զարգացնել Նախարարության վերահսկողության, մոնիթորինգի և գնահատման գործիքակազմերը.

4) զարգացնել հանրության հետ ամենօրյա և ռազմավարական հաղորդակցության կարողությունները, ապահովել թափանցիկ և հաշվետու գործելաոճի նոր մեթոդներ:

33. Ոստիկանության արդյունավետ կառավարման առումով կարևոր ձեռքբերում է Ոստիկանության կողմից բացառապես ոստիկանական գործառույթների իրականացումը: Որպես ռազմավարական մոտեցում՝ Ոստիկանությունը զարգանալու է 4 հենասյունային ուղղություններով, որոնք փոխլրացնող ազդեցության գոտի են երաշխավորելու՝ ապահովելով նոր որակի ծառայության մատուցում հանրությանը: Կառավարման նոր մոդելի անցումը ենթադրում է նաև Ոստիկանության մարզային վարչությունների լուծարում. 4 հենասյունային ուղղություններով ստորաբաժանումները Երևանում և մարզերում ունենալու են իրենց տարածքային ստորաբաժանումները՝ ուղղաձիգ և արդյունավետ կառավարմամբ՝ բացառելով կրկնվող գործառույթները: Կառավարման այս մոդելն ապացուցել է իր արդյունավետությունը Պարեկային ծառայության օրինակով, ինչը

լավ հենք է ստեղծել շարունակելու և ապահովելու ողջ ոստիկանական համակարգի կառավարման մոդելի փոփոխությունը:

34. Կառավարման մոդելի համատեքստում ուղղաձիգ և արդյունավետ կառավարումն ամբողջական արդյունք կարող է երաշխավորել այն պայմաններում, երբ կառավարման սխեման լինի պարզ և չներառի կառավարման ավելորդ օղակներ: Ուստի, ընդունելի է համարվում այն, որ 4 հենասյունային ուղղությունների՝ Պարեկային ծառայության, Քրեական ոստիկանության, Համայնքային ոստիկանության և Ոստիկանության գվարդիայի ղեկավարները համատեղեն նաև փոխոստիկանապետի պաշտոնը: Ստացվում է, որ հենասյունային ուղղության ղեկավարի և Ոստիկանապետի միջև կառավարման տեսանկյունից այլ օղակ չի լինի, ինչն ավելի պրակտիկ, օպերատիվ և պարզ կառավարում է ենթադրում:

35. Հանրությանը բարեխղճորեն ծառայող ու հանրության վստահությունը վայելող ծառայություն ունենալու համար անհրաժեշտ է բարելավել Ոստիկանության աշխատանքի թափանցիկությունը բոլոր ուղղություններով՝ առավել հաճախակի ու մատչելի տեղեկությունների տրամադրմամբ, հաշվետվությունների և ուսումնասիրությունների վերաբերյալ տեղեկատվության տարածմամբ, պարբերական մեդիա բրիֆինգների միջոցով և հասարակայնության հետ կապերի առավել նոր ու ժամանակակից միջոցների արդյունավետ օգտագործմամբ: Եթե Ոստիկանությունը կարողանա հանրությանը պրոակտիվ կերպով տեղեկացնել հանրային հնչեղություն ունեցող հարցերի, իրականացվող կանխարգելիչ միջոցառումների, իր ծառայության առանձնահատկությունների, խիզախություն և ծառայողական արժանիքներ դրսևորած ծառայողների մասին, ապա առավել ընկալելի և թափանցիկ կառույց կդառնա հանրության ընկալման մեջ, ինչը չի կարող դրական ազդեցություն չունենալ թե՛ կոռուպցիայի կանխարգելման, թե՛ համակարգի նկատմամբ հանրության վստահության ամրապնդման տեսանկյունից:

36. Հաշվետվողականությունը հնարավոր է բարելավել տարբեր իրավախախտումների տեսակների, ինչպես նաև Ոստիկանության տարբեր ծառայողների և ստորաբաժանումների դրսևորած արդյունքների վերաբերյալ առավել մատչելի, հակիրճ ու մանրամասն վերլուծություններ և հաշվետվություններ հրապարակելու միջոցով: Այս հաշվետվողական ակտիվությունն առավել մեծ լեգիտիմություն կտա ծառայությանը և դրական փոփոխությունների կհանգեցնի հանրային կարծիքի ձևավորման հարցում:

37. Հանրության հետ հաղորդակցության և վստահության տեսանկյունից կարևոր է նաև Ոստիկանության միասնական արտաքին նկարագրի ապահովումը, այդ թվում՝ Ոստիկանության համազգեստների և տրանսպորտային միջոցների համար միանման չափանիշների հաստատումը, անհրաժեշտ քանակի և բաշխման սահմանումը, Ոստիկանության շենքերի, շինությունների համար չափանիշների ու տիպային մոդելի, ինչպես նաև լոկացիոն քարտեզի հաստատումը, ինչը մի կողմից կձևավորի Ոստիկանության արտաքին կերպարի վերաբերյալ հստակ և օբյեկտիվ ակնկալիքներ հասարակության շրջանում, մյուս կողմից

առավել ընկալելի կդարձնի Ոստիկանությունը և ծառայողներին նրանց հետ առնչվող անձանց համար:

2. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ, ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

2.1. Մարդկային ռեսուրսների կառավարումը որպես ռազմավարական մոտեցում

38. Ոստիկանության ոլորտի միասնական քաղաքականություն մշակող և իրականացնող գործադիր իշխանության մարմնի ստեղծման շրջանակներում որդեգրված կարևոր մոտեցումներից էր այն, որ ոչ մասնագիտացված ոստիկանական գործառույթներ իրականացնող անձնակազմը պետք է կազմի Նախարարության մաս և զբաղեցնի քաղաքացիական ծառայության հաստիքներ՝ Նախարարության ներքո քաղաքացիական ծառայության ձևով իրականացնելով անհրաժեշտ գործառույթները: Հետևապես, կարող ենք փաստել, որ Ոստիկանության բարեփոխումների 2020-2022 թվականների ռազմավարությամբ նախատեսված կադրային լուծումներից հաջողությամբ իրականացվել է Ոստիկանության համակարգում որոշ պաշտոնների խմբերի (կապված ֆինանսական, տնտեսական, մարդկային ռեսուրսների կառավարման, իրավաբանական, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների, հասարակայնության հետ կապերի գործառույթների հետ) քաղաքացիական ծառայության համակարգ անցնելու ծրագիրը:

39. Քաղաքացիական ծառայության համակարգ տեղափոխված ստորաբաժանումներից է կադրային կառավարման գործառույթներ իրականացնող Մարդկային ռեսուրսների կառավարման վարչությունը, որն արդեն իսկ բաց և թափանցիկ մրցութային ձևաչափով կազմավորվել է 2023 թվականի ընթացքում և գործում է: Հատկանշական է, որ Ներքին գործերի նախարարության համար այս վարչության ձևավորումը ոչ միայն քաղաքացիական ծառայության ձևով կադրային գործառույթների իրականացում է, այլև քաղաքացիական նախարարության կողմից մարդկային ռեսուրսների կառավարման ռազմավարական մոտեցումների ձևավորման նախադրյալի ապահովում:

40. Ներքին գործերի նախարարության մարդկային ռեսուրսների կառավարման նոր ձևավորված վարչությունը պատասխանատու է ինչպես Նախարարության, այնպես էլ Նախարարությանը ենթակա մարմինների, այդ թվում՝ Ոստիկանության կադրային քաղաքականության մշակման և կիրառման, մարդկային ռեսուրսների կառավարման ոլորտում նախատեսված բարեփոխումների իմպլեմենտացման համար:

41. Ակնհայտ է, որ ոլորտային բարեփոխումների իրականացման համար այս վարչությունն առանցքային դեր ու նշանակություն ունի: Հանրային անվտանգության ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության նախաձեռնած բարեփոխումների հաջողությունն ու կայունությունը կախված են հմուտ, մոտիվացված և

պրոֆեսիոնալ աշխատուժից: Մարդկային ռեսուրսների կառավարման ռազմավարության վրա կենտրոնանալը Կառավարությանը և Ներքին գործերի նախարարությանը թույլ կտա ամրապնդել ժողովրդավարական արժեքներին համահունչ ժամանակակից և արդյունավետ իրավապահ մեխանիզմի հիմքերը՝ արդյունավետորեն լուծելով Հայաստանի առջև ծառացած մարտահրավերները:

42. Կադրերի համալրման գործընթացում ուղենիշ պետք է հանդիսանա այնպիսի անձանց ներգրավումը Ոստիկանությունում, ովքեր հանցավորության նկատմամբ ունեն անհանդուրժող վերաբերմունք, պատրաստ և ունակ են գնահատել և բարելավել իրենց գործառույթի իրականացումը, արժևորում են հասարակական անվտանգությունը, ինչպես նաև անձանց նկատմամբ ցուցաբերում են հոգատար ու պատասխանատու վերաբերմունք:

43. Հատուկ քայլեր պետք է ձեռնարկվեն սոցիալական, սեռատարիքային բազմազանություն ունեցող, տարբեր գիտելիքների և կարողությունների տիրապետող անձանց ոստիկանական համակարգում ներգրավմանը նպաստելու համար՝ խրախուսելով իրավապահ մարմիններում աշխատանքի ներառական միջավայրի ստեղծումը, որը կարտացոլի հասարակության ավելի լայն ժողովրդագրությունը և միաժամանակ կնպաստի ոստիկանության լիազորությունների առավել արդյունավետ իրականացմանը՝ միավորելով ծառայողների գիտելիքները և փորձը:

44. Մարդկային ռեսուրսների արդյունավետ կառավարման ուղղությամբ կարելի է առանձնացնել փոփոխությունների հետևյալ հիմնական բաղադրիչները՝

1) անհրաժեշտ է կադրերի հավաքագրմանը (ներգրավմանը) վերաբերող հատուկ ծրագրի մշակում համակարգում թիրախային կերպով կարողունակ կադրերի ներգրավման համար.

2) հմուտ կադրերին ծառայությունում հետագայում պահելու տեսանկյունից նշանակալի է արդարացի վարձատրության, աշխատանք-կյանք հավասարակշռության հաստատմանն ուղղված լուծումների կյանքի կոչումը, գենդերազգայուն և գենդերարձագանքող քաղաքականության ու ընթացակարգերի մշակումը, ինչը թույլ կտա խթանել կանանց ներգրավումը և առաջխաղացումը Ոստիկանությունում: Այս տեսանկյունից սկզբունքային է նաև կատարողականի գնահատման արդար, թափանցիկ և անկողմնակալ գործընթացի ներդրումը՝ այս նպատակով ձևավորվող հանձնաժողովների կողմից, ինչպես նաև կատարողականի հստակ, օբյեկտիվ ցուցիչների սահմանումը: Կատարողականի գնահատման՝ ոստիկանական ծառայության առաքելությանը և նպատակներին համահունչ ցուցիչները պետք է հետևողականորեն կիրառվեն բոլոր ծառայողների համար, իսկ առաջխաղացման և պարգևատրումների վերաբերյալ որոշումները պետք է հիմնված լինեն արժանիքների օբյեկտիվ գնահատման վրա.

3) դիմակայուն ոստիկանի կերպարի ամրապնդման համար հենասյունային կետ է ծառայողի ֆիզիկական և հոգեկան առողջության անհրաժեշտ վիճակը: Այս առումով պետք է հիմնովին վերանայել ծառայողի բժշկական զննության առկա կարգը,

բժշկական սպասարկումը վերապահել ոլորտային նախարարությանը՝ Առողջապահության նախարարությանը, որն ավելի մասնագիտացված կերպով կապահովի գործընթացը, ինչպես նաև ներդնել ծառայողին հոգեբանական ծառայության տրամադրման մեխանիզմ, որը կբարձրացնի ծառայողի սթրեսակայունությունը, բարձր լարվածությամբ գործողություններից հետո դուրս կբերի լարվածությունը ու կնպաստի առողջ հոգեբանական վիճակի կայունացմանը.

4) համակարգի արդյունավետության բարձրացման համար կարևոր են կադրերի հոսունության տեմպերի, շարժի գնահատումը և համապարփակ վերլուծությունը, ինչը հնարավորություն կտա հասկանալու տարբեր կարողությունների պահանջարկը համակարգում, նոր ընդունելությունների պարբերականությունը, ծառայության գրավչության մակարդակը: Սա թույլ կտա մշտապես զգալ համակարգի կադրային վիճակն ու օպերատիվ կերպով հասցեագրել խնդիրները.

5) մարդկային ռեսուրսների կառավարման ոլորտի բարեփոխումները պետք է սերտորեն փոխկապակցված լինեն կրթական ծրագրերի հետ, որպեսզի համակարգում առավել փորձառու և արդյունավետ կադրեր ունենալու նպատակը լինի պրակտիկ իրագործելի: Ընդհանուր առմամբ կադրային արդյունավետությունն ուղղակիորեն պայմանավորված է լինելու նաև ՆԳՆ կրթահամալիրում ծրագրերի վերանայմամբ և թիրախային դասընթացների ապահովմամբ: Մասնագիտական աճի տեսանկյունից տեսանելի արդյունք կարող է ապահովել մենթորության, քոուչինգի ծրագրերի իրականացումը:

45. Ինչպես հետևում է վերոնշյալից, մարդկային ռեսուրսների կառավարման ոլորտում նախատեսվում են ծավալուն բարեփոխումներ, իսկ դրանց ծրագրային քայլերի հստակեցման, արդյունավետ, հետևողական իրականացման համար կմշակվի և կընդունվի Մարդկային ռեսուրսների կառավարման համալիր ծրագիրը, որը կապահովի համապատասխան մեխանիզմներ՝ ինստիտուցիոնալ ամբողջականության և գենդերային հավասարակշռության սկզբունքների վրա հիմնվելով՝ կարողունակ անձնակազմ ներգրավելու և վերջիններիս համակարգում պահելու համար: Այդ տիպային փաստաթղթերը հետագայում էլ կկիրառվեն ՄՌԿ վարչության կողմից տարեկան գործողությունների ծրագիրը մշակելիս:

46. Վերոնշյալ փոփոխություններն արդյունավետորեն ներդնելու նախապայման է մարդկային ռեսուրսների կառավարմամբ զբաղվող անձնակազմի կարողությունների զարգացումը՝ վերապատրաստումների, փորձի փոխանակումների միջոցով, ինչպես նաև վարչության տեխնիկական վերազինումը: Ավելին, հատուկ կարևորություն է տրվելու Ոստիկանությունում կադրերի կառավարման համակարգի թվայնացման և արդիականացման պահանջների գնահատմանը և դրա հիման վրա թվայնացման գործընթացի մեկնարկին՝ ապահովելով վարչության անձնակազմի աշխատանքային գործընթացը պարզեցնող թվային գործիքների կիրառումը:

2.2. Ոստիկանությունում կանանց ներգրավվածության բարձրացմանն ուղղված ջանքեր, ծառայության գրավչություն և ներառականություն

47. Մարդկային ռեսուրսների կառավարման գործընթացների և Ոստիկանության ծառայության որակի բարելավման տեսանկյունից կարևոր է բարձր մասնագիտական հմտություններ և տարբեր կարողություններ ունեցող անձանց, այդ թվում՝ կանանց, ներգրավումը Ոստիկանությունում:

48. Մասնագիտական գրականությամբ շեշտվում են իրավապահ համակարգերում կանանց ներգրավման հետևյալ հիմնական առավելությունները՝

1) կանայք ավելի քիչ են հակված գործադրելու անհամաչափ ուժ և առավել պակաս են ներգրավվում ծառայողական կարգապահության խախտումներում: Այս ասպեկտն առավել կարևորվում է Ոստիկանության կողմից անհամաչափ ուժի կիրառման դեպքերի վերաբերյալ հնչող հանրային խոսույթում: Նման հետևության պատճառներից մեկն էլ այն է, որ կին ծառայողները ենթագիտակցորեն էլ լարված իրավիճակներում սովորաբար հակված են դե-էսկալացման տակտիկաների կիրառմանը.

2) ընտանեկան կամ սեռական բռնության դեպքերում կին ծառայողներն առավել մեծ արդյունավետություն են ապահովում՝ սկսած տուժողների դիմում ընդունելուց, մինչև անհրաժեշտ պաշտպանության տրամադրում, որի որակն էականորեն շահում է գենդերազգայուն մոտեցումների ցուցաբերման արդյունքում: Միաժամանակ, հարկ է նկատել, որ հատկապես սեռական բռնության ենթարկված անձինք առավել զգայուն և հոգեբանական տեսանկյունից խոցելի են: Տուժողները հաճախ որոշ շրջան կարող են դժվարանալ տղամարդկանց հետ հաղորդակցության ընթացքում՝ ենթագիտակցորեն նույնացնելով ցանկացած տղամարդու բռնարարի հետ: Նման դեպքերում առանձնակի կարևորություն ունի կին ծառայողների առկայությունը, որոնց հետ հաղորդակցությունը, որպես կանոն, տուժողների համար հոգեբանական տեսանկյունից նվազ ճնշող կլինի.

3) կին ծառայողներն առավել արդյունավետ են Ոստիկանություն-համայնք լավ հարաբերություններ կառուցելու և համայնքամետ ծառայություն իրականացնելու հարցում: Ըստ Ոստիկանապետերի միջազգային ասոցիացիայի տվյալների՝ կին ծառայողները հաճախ հաղորդակցության ավելի լավ հմտություններ ունեն, ինչն անդրադառնում է համայնքի բնակիչների հետ ավելի լավ, ավելի վստահելի հարաբերությունների հաստատմանը: Մյուս կողմից համայնքի հետ հաղորդակցության լավ հմտությունները երաշխիքն են օպերատիվ տեղեկություններ հավաքելու այնպիսի անձանցից, որոնք տղամարդ ծառայողներին երբեք չէին պատմի այն, ինչով կկիսվեն կին ծառայողի հետ.

4) կանանց «խնդիր լուծելու/problem solving» զարգացած հմտությունները կարող են նպաստել Ոստիկանության ծառայության արդյունավետության բարձրացման, իսկ ժամանակակից իրավապահ համակարգում ծառայության՝ «խնդիրների լուծման» մեթոդը կրիտիկական է որևէ ծառայության արդյունավետության համար.

5) աշխատանքային միջավայրում փոխվում է նաև տղամարդ գործընկերների վարքագիծը, բերում է ավելի հանդուրժող, ավելի զուսպ, ավելի կարգապահ մթնոլորտի ձևավորմանը:

49. Ուստի, համադրելով տղամարդ ծառայողների պոտենցիալը կին ծառայողների վերը թվարկված ու այլ առավելությունների հետ, միանշանակ հնարավոր է էականորեն բարելավել Հայաստանի ոստիկանական համակարգի արդյունավետությունը:

50. Հենց այս հանգամանքների հաշվառմամբ էլ առավել մեծ թվով կանանց ներգրավումը Ոստիկանության համակարգում բարեփոխումների նախաձեռնման պահից միշտ եղել է ոլորտի պատասխանատուների ուշադրության կենտրոնում: 2023 թվականին ձեռնարկվել են բազմաթիվ միջոցառումներ, տեղեկատվական արշավներ՝ ուղղված Ոստիկանության համապատասխան ստորաբաժանումներում կին ծառայողների առավել մեծ թվի ներգրավմանը, Ոստիկանության համակարգում կանանց տեսանելիության բարձրացմանը: Մասնավորապես՝ Պարեկային ծառայությունում կին պարեկների ներգրավման խթանման նպատակով իրականացվել է «Եղի՛ր ուժ մեր երկրի համար» լայնամասշտաբ իրազեկման արշավը, փոփոխվել են ծառայության անցնելու համար սահմանված պահանջները, իրականացվել են ծառայության անցնելուն խոչընդոտող հանգամանքները բացահայտելուն ուղղված ֆոկուս-խմբային քննարկումներ, մշակվել է գործողությունների ծրագիր, իրականացվել է դիմորդների՝ նախադեպը չունեցող նախագրանցում և 2023 թվականին հայտարարված նոր ընդունելություն շրջանակներում գերակշիռ տեղերը հատկացվել են կին դիմորդներին: Արդյունքում 140 կին մասնակցել է ծառայության շարքերը համալրելու նպատակով անցկացվող քննություններին: Նոր Քրեական ոստիկանության ձևավորման նպատակով անցկացվող մրցույթի շրջանակներում մրցութային տեղերի 20 տոկոսը հատկացվել է կին դիմորդներին:

51. Առաջնորդվելով Ոստիկանությունում կին ծառայողների ներգրավվածության մակարդակը բարձրացնելու Կառավարության տեսլականով և դրա լույսի ներքո նկատի ունենալով կանանց ներգրավման առնչությամբ դեռևս առկա կարծրատիպերը՝ անհրաժեշտ է հետևողականորեն շարունակել կանանց ներգրավվածությունը խթանող միջոցառումները և ծրագրերը՝ ապահովելով աշխատանքային գրավիչ պայմաններ և բերելով մշակութային փոփոխություն:

52. Ծառայության գրավչության բարձրացման և որակյալ կադրերին համակարգում պահելու համար տարբեր մեթոդներ կան, սակայն պակաս կարևոր չէ ծառայողների սոցիալական երաշխիքների ամրապնդումը: Այդ նպատակով կատարվել են օրենսդրական փոփոխություններ՝ ուղղված ոստիկանների ատեստավորման համակարգի ներդրմանը: Նոր օրենսդրական կարգավորումները ոստիկաններին հնարավորություն են տալիս անցնել ատեստավորում և աշխատավարձից բացի ստանալ նաև հավելավճար: Կառավարության կողմից հաստատվել են ատեստավորման անցկացման կարգերը և ատեստացիայի արդյունքում վճարվող հավելավճարի չափերը: Ատեստավորման արդյունքներով ոստիկանները կարող են կրկնապատկել իրենց դրամական ապահովումը:

2023 թվականի ընթացքում արդեն իսկ իրականացվել է 1119 ծառայողի ատեստավորում, որը հաջողությամբ հաղթահարել է 189 ծառայող: Նրանցից 18-ը գնահատվել են գերազանց, 101-ը՝ լավ, իսկ 70-ը՝ բավարար: Այսօր համակարգում ատեստացիայի շնորհիվ, օրինակ, օպերատիվ աշխատակիցը, ով նախկինում ստացել է 222.000 ՀՀ դրամ (զուտ) դրամական բավարարում, ատեստացիան գերազանցությամբ հանձնելով, ստանում է 459.000 ՀՀ դրամ (զուտ): Ատեստավորումը նախատեսված է որպես շարունակական գործընթաց, որը նաև ապագայում կբարելավի Ոստիկանության ծառայողների սոցիալական ապահովումը: Միջնաժամկետ պլանում ընդունելի կարող է լինել սոցիալական այս երաշխիքի և կատարողական գնահատման նոր գործիքակազմի միջև կապի սերտացումը, որը թույլ կտա սոցիալական երաշխիքի մակարդակը կապել կատարողական գնահատման հետ, ինչը ծառայողին մշտապես մրցունակ կարգավիճակում կպահի:

2.3. Կոռուպցիայի կանխարգելում, բարեվարքություն, հանրային հաշվետվողականություն և թափանցիկություն

53. Մարդկային ռեսուրսների կառավարման ոլորտի բարեփոխման համար նախատեսված ծրագրային քայլերի շրջանակներում ծառայության ընդունման, ծառայությունում առաջխաղացման նոր արժանիքահեն մեթոդների մշակումը և դրանց գործնականում կիրառումն ապահովելուն ուղղված քայլերը նաև ազդեցություն են ունենալու հմուտ մասնագետներին համակարգում պահելու, ոստիկանական աշխատանքը գրավիչ դարձնելու, համակարգում կոռուպցիոն ռիսկերը սահմանափակելու և Ոստիկանության նկատմամբ հանրային վստահության մակարդակը բարձրացնելու գործում:

54. 2023 թվականին ձևավորվել է Ներքին գործերի նախարարության հակակոռուպցիոն ոլորտի հիմնական պատասխանատու ստորաբաժանումը՝ Ներքին անվտանգության և հակակոռուպցիոն վարչությունը, որը գործում է Ներքին գործերի նախարարի անմիջական ենթակայությամբ: Վարչությունը՝ որպես Նախարարությունում, նրան ենթակա պետական մարմիններում և կազմակերպություններում ուսումնասիրություններ, ստուգումներ, ծառայողական քննություններ և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող ստորաբաժանում, հետապնդում է Ներքին գործերի նախարարության և Ոստիկանության նկատմամբ հանրային վստահությունն ամրապնդելու և ծառայողների կողմից կարգապահական, էթիկայի և բարեվարքության կանոնների հնարավոր խախտումները կանխարգելելու, թույլ տրված կարգապահական, էթիկայի և բարեվարքության կանոնների խախտման յուրաքանչյուր դեպքը հայտնաբերելու, դրանք ծնող պատճառները ու նպաստող պայմանները վերացնելու հիմնական նպատակները:

55. 2023 թվականի ընթացքում Ներքին գործերի նախարարության ներքին անվտանգության և հակակոռուպցիոն վարչությունում կատարվել են 1099 ծառայողական քննություններ և ուսումնասիրություններ: Կատարված ծառայողական քննությունների արդյունքներով ՆԳՆ ոստիկանության ծառայողների նկատմամբ կիրառվել են 222

կարգապահական տույժեր: 2023 թ. ընթացքում Ներքին գործերի նախարարությունում հրավիրվել է կարգապահական հանձնաժողովի 5 նիստ, որոնց շրջանակներում քննարկվել են ոստիկանության 26 ծառայողի վերաբերյալ իրականացված ծառայողական քննությունների նյութեր: Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ ՆԳ նախարարության համար առաջնահերթություն են հանդիսացել հանրային հաշվետվողականությունն ու վերահսկողությունը վարչության գործունեության նկատմամբ. ծառայողական քննությունների, ուսումնասիրությունների արդյունքների հանրային իրազեկումը կարևորվել և պատշաճ կերպով իրականացվել է: Նման մոտեցումը շարունակվելու է կիրառվել նաև հետագայում՝ նպաստելով վարչության գործունեության թափանցիկությանը և վարչության ծառայողների կարողությունների ամրապնդմանը և զարգացմանը:

56. Ակնհայտ է, որ վարչությունը կարող է թիրախային արդյունքներ ապահովել, եթե տարեկան կտրվածքով իր կատարած աշխատանքները հենվեն ռիսկային գոտիների վերհանման, դրանց կանոնավոր վերլուծության, բարեվարքության ռիսկայնության գնահատման, քաղաքացիներից ստացված հետադարձ կապի արդյունքների և այլ բովանդակային տվյալների վրա: Ընդ որում՝ որոշարկված միջոցառումների, դրանց կատարողականի և դրանց արդյունքներով ձեռնարկված քայլերի մասին տեղեկատվությունը պետք է լինի հանրամատչելի:

57. Համակարգում կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելու, բարեվարքությունն ամրապնդելու, համակարգի կարգապահությունը բարձրացնելու և Ոստիկանության նկատմամբ հանրային վստահության մակարդակն ավելի բարձրացնելու համար անհրաժեշտ է՝

1) մշակել տարեկան հակակոռուպցիոն աշխատանքային ծրագիր, որը հիմնված կլինի ամբողջ համակարգի ռիսկային գոտիների համակարգված և համապարփակ վերլուծության վրա, և որում, ըստ ռիսկային հակվածության գոտիների, կնախատեսվեն թիրախային միջոցառումներ, ստուգումներ, կանոնավոր վերլուծություններ՝ կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելու նպատակադրմամբ: Տարեկան ծրագիրը, դրա կատարողականը պետք է հրապարակային լինեն.

2) Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի հետ համատեղ մշակել համակարգի ծառայողների բարեվարքության ռիսկերի գնահատման գործիքակազմ.

3) բարեվարքության ամրապնդման տեսանկյունից կարևոր նախաձեռնություն կլինեն բարեվարքության նկատմամբ վերահսկողություն իրականացնող անձնակազմի կարողությունների զարգացման համար հատուկ ծրագրերի իրականացումը և նրանց համագործակցության ամրապնդումը ոլորտի պատասխանատու այլ մարմինների հետ: Բարեվարքության և կարգապահական կանոնների խախտման դեպքում ահազանգման գործուն մեխանիզմի ներդրումը և ահազանգողների պատշաճ պաշտպանության ապահովումը, ինչպես նաև դրա վերաբերյալ իրազեկումը նույնպես լրացուցիչ երաշխիք են հանդիսանալու Ոստիկանության ծառայողների շրջանում բարեվարքության և կարգապահության ամրապնդման համար.

4) հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների տրամաբանությամբ մշակել Ոստիկանության ծառայողների վարքագծի կանոններ, այդ թվում՝ էթիկայի կանոնների ներառմամբ: Կարևորվում է վարքագծի կանոնների ապահովման տեսանկյունից բոլոր ծառայողների կարողությունների զարգացման բաղադրիչում դրանց հստակ ներկայացումը.

5) վերանայել Ոստիկանության կարգապահական կանոնագիրքը, որով կնախատեսվեն Ոստիկանության ծառայողների կարգապահության չափանիշները և նրանց կարգապահական պատասխանատվության կարգավորումները, էթիկայի հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը, ծառայողական քննության անցկացման ճկուն ընթացակարգը, այդ թվում՝ թվային տեխնոլոգիաների կիրառմամբ.

6) ներդնել Ոստիկանության ծառայողների առաքինության ստուգման գործիքակազմ: Առաքինության ստուգումը ենթադրում է սիմուլյացիոն թեստեր, որոնք հնարավորություն են տալիս մշտադիտարկել կամ պարբերաբար ստուգել Ոստիկանության ծառայողի կողմից կոռուպցիոն վարվելակերպի դրսևորումը: Առաքինության ստուգումը կարող է իրականացվել թիրախային կամ պատահական կերպով և նպաստում է կոռուպցիայի կանխարգելմանը: Առաքինության ստուգման բացասական արդյունքները կարող են ծառայել որպես Ոստիկանության ծառայողի կարգապահական պատասխանատվության հիմք: Հարկ է նկատել նաև, որ ՀՀ օրենսդրությամբ արդեն իսկ նման գործիքակազմ է նախատեսվել «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքով.

7) ուշադրություն դարձնել նաև Ոստիկանությունից ազատված անձանց հետագա վարքագծին, որը թափանցիկության և շահերի բախման ռիսկերի մեղմման համատեքստում կարևոր ցուցիչ կարող է լինել:

58. Նախատեսվում է նաև զարգացնել վերը նշված ուղղություններով անձնակազմի կարողությունները՝ իրականացնելով վերապատրաստումներ, մշակելով մեթոդական ուղեցույցներ, արդիականացնելով վարչության տեխնիկական միջոցները՝ ժամանակակից մարտահրավերներին դիմակայելուն ունակ Ներքին անվտանգության և հակակոռուպցիոն վարչություն ունենալու համար:

59. Հատկանշական է, որը վերը նշված ուղղությունները լիովին համապատասխանում են Եվրոպայի խորհրդի կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբի (ԳՐԵԿՈ)՝ Ոստիկանության բարեվարքության գնահատման շրջանակներում տրված հանձնարարականներին: Ըստ այդմ՝ դրանց կատարումը լինելու է առաջնային:

3. ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ, ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԴՐԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ, ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

3.1. Ոստիկանության կադրերի կրթության ընթացիկ իրավիճակը

60. Ոստիկանության կրթահամալիրը պատմական մեծ ավանդ ունի Ոստիկանության կադրերի կրթության ոլորտում: 20-րդ դարից տարբեր կարգավիճակներում

գործունեություն ծավալած և մեր օրեր հասած կրթական հաստատությունն իր ստեղծման հիմքում դրված խնդիրները տվյալ ժամանակաշրջանի համար իրականացրել է բավարար չափով:

61. Այս փաստին զուգահեռ պետք է ընդունել, որ ժամանակակից աշխարհում ոստիկանությունն այլևս մասնագիտություն է, այն չի կարող պատշաճ իրականացվել մասնակիորեն փոփոխված նախկին կրթական համակարգի կողմից պատրաստված իրավաբաններով:

62. Ժամանակակից ոստիկանության առջև դրվող խնդիրները շատ բազմաշերտ ու բարդ են, ուստի, պահանջում են ավելի զարգացած ու ավելի նեղ մասնագիտական կարողություններ ու հմտություններ, հատուկ սարքավորումների ու տեխնիկական միջոցների հագեցում, ժամանակակից ոստիկանությունը պահանջում է առավելապես խնդիրներ լուծելու, սթրեսային բարդ իրավիճակներում կողմնորոշվելու, իրավիճակը գնահատելու, արագ որոշումներ կայացնելու և քննադատական մտածողության կարողություններ՝ ի համեմատություն 20-րդ դարի ոստիկանական չափանիշների:

63. Անհրաժեշտ է պատրաստել և կրթել ոչ թե իրավաբանի, այլ ոստիկանի՝ անհրաժեշտ չափի և խորության տեսական, ոստիկանության գործի տակտիկական գիտելիքների ու մասնագիտական հմտությունների զարգացմանը միտված կրթական ծրագրերով:

64. Տարիներ շարունակ Կրթահամալիրը պատրաստել է այնպիսի իրավաբանների, որոնք պետականաշինության, իրավական մտքի զարգացման գործում մեծ ներդրում են ունեցել և ունեն այսօր: Սակայն այս փաստի ընդունումը չպետք է խոչընդոտ հանդիսանա Կրթահամալիրի զարգացման, արդի պահանջներին համապատասխան վերափոխվելու և 21-րդ դարի ոստիկանական աշխատանքին համապատասխան կրթություն երաշխավորելու համար:

65. Իրավաբանական կրթություն ապահովում են հանրապետությունում գործունեություն ծավալող բազմաթիվ բարձրագույն ուսումնական հաստատություններ, հետևապես Ներքին գործերի նախարարության կազմում կրթահամալիր ունենալու տրամաբանությունը նեղ մասնագիտացված կրթական հաստատություն ունենալու մեջ է, որ պետք է սպասարկի Նախարարության կադրերի պատրաստման կարիքը: Հենց այս գաղափարի ընդունմամբ է, որ Կրթահամալիրը 2023-2024 ուսումնական տարում չի կազմակերպել իրավաբանական կրթության ընդունելություն: Միաժամանակ, սա չպետք է հանգեցնի արդեն իրավաբանական կրթություն ստացող ուսանողների կարգավիճակի փոփոխությանը և բերի ուսուցման ընդհատմանը:

66. Նեղ մասնագիտացված կրթահամալիրի կողմից ոստիկանության ոլորտի կրթությունը չպետք է գոյություն ունենա որպես լավ ավանդույթների շարունակություն, այլ պետք է լրջորեն կապակցվի ոստիկանությունում ծառայության առջև դրված մարտահրավերներին և իրական ու անաչառ գնահատված կարիքներին: Կրթահամալիրը պետք

է կենտրոնանա այն կարողությունների պատրաստման ու վերապատրաստման վրա, որոնք իրապես և այդ ծավալով անհրաժեշտ են ծառայությանը:

67. Ներքին գործերի նախարարության ձևավորմամբ Ոստիկանության կրթահամալիրի համար երաշխավորվել է ճիշտ դիրքավորում, այն է՝ որպես Նախարարության ենթակայությամբ գործող պետական ոչ առևտրային կազմակերպություն՝ այդպիսով դուրս բերելով վերջինիս Ոստիկանության ենթակայությունից: Իրականում նույն կառույցը չի կարող օբյեկտիվորեն մշակել կադրային քաղաքականությունն ու արդյունավետ իրականացնել այն: Ներքին գործերի նախարարության ձևավորմամբ կադրային քաղաքականության մշակման և իրականացման ուղղություններով նոր դերակատարների ի հայտ գալն ու նոր դերաբաշխումներն առավելագույնս կնպաստեն կադրերի որակյալ կրթության ապահովմանը:

68. Տեղակայմանը հաջորդող քայլը Ոստիկանության կրթահամալիրի և Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի միավորումն է ՆԳՆ մեկ միասնական կրթահամալիրի ներքո: Սա առաջին հերթին ենթադրում է որակական փոփոխության անհրաժեշտ նախադրյալի ստեղծում, ապա՝ օպտիմալացում և արդյունավետ կառավարում, ռեսուրսների ճիշտ բաշխում: Ընդ որում՝ մեկ միասնական կրթահամալիրի ներքո կադրերի կրթությունը թույլ կտա ապահովել ոչ միայն առանձին վերցրած ոստիկանների և փրկարար ծառայողների կողմից հանրությանը մատուցվող ծառայության որակի փոփոխությունը, այլև արտակարգ և ճգնաժամային այլ իրավիճակներում ոստիկանության և փրկարար ծառայողների փոխլրացնող և օպերատիվ արձագանքը:

69. Կադրերի պատրաստման մեթոդը ևս հավասարապես կարևոր է: Ժամանակակից ոստիկանության կադրերի պատրաստման հաջողված մեթոդն այլևս մանկավարժականը չէ, այլև մեծահասակների համար ինտերակտիվ կրթության, հոգեբանական ու տակտիկական պատրաստման մեթոդն է, որը լրջորեն թիրախավորում է միջանձնային հաղորդակցության, մշակութային բազմազանության, խնդիրների լուծման ու հաշտարարության կարողությունների զարգացումը: Միայն լսարաններում անցնող կրթությունը ոստիկանության աշխատանքի առումով սովորաբար անարդյունավետ է, Պարեկային ծառայության տեսական և գործնական ճիշտ չափաբաժիններով մշակված բազային կուրսն արդարացրել է կադրերի պատրաստման նոր մեթոդաբանությամբ կրթության կազմակերպումը, ուստի այն ծառայում է որպես դրական օրինակ՝ շարունակելու համար կրթության մեթոդաբանության ամբողջական փոփոխությունը:

70. Կադրերի պատրաստման միջոցների երբեմն նույնիսկ պարզ փոփոխությունները կարող են տալ ցանկալի արդյունքը: Օրինակ՝ ինտերակտիվ սցենարների վրա հիմնված վիրտուալ հրաձգարանների օգտագործումը. մանրակրկիտ մշակված սցենարի դեպքում այն կարող է սովորեցնել ավելին, քան միայն կրակելը, կարող է տալ խնդիրների լուծման, ռիսկի նույնականացման և շատ այլ պիտանի հմտություններ:

71. Եվ վերջապես, կարևոր են նաև այն բարոյահոգեբանական միջավայրը և անգամ ֆիզիկական պայմանները, որում պատրաստվում են ոստիկանության կադրերը:

Ըստ էության, հայրենասեր ու վստահելի, հանրության անվտանգության երաշխավոր ծառայողի պատրաստման ընթացքում արմատախիլ պետք է արվի ոստիկանին հասարակությունից դուրս դնելու կամ հասարակության հետ կոնֆրոնտացիայի մեջ գտնվող հանրային ծառայողի կերպարի մասին մտածողությունը:

72. Պատրաստումն անհրաժեշտ, բայց ոչ բավարար գործընթաց է: Հավասարապես, եթե ոչ ավելի կարևոր է կադրերի շարունակական կրթությունը, որը թույլ կտա բազային կրթությունը լրացնել անհրաժեշտ գիտելիքներով և հմտություններով: Ընդ որում՝ առկա՝ երեք տարին մեկ անգամ ֆորմալ վերապատրաստումը վաղուց արդեն չի ծառայում իր նպատակին: Այս հանգամանքի գիտակցմամբ պետք է երաշխավորել տարեկան կտրվածքով շարունակական մասնագիտական զարգացում, որի մեթոդաբանությունը պետք է ճկուն լինի:

73. Կադրերի որակյալ կրթության ապահովումից զատ պետք է նկատել, որ այն ուղիղ փոխկապակցված է այն հարցի հետ, թե ինչպես է հնարավոր առաջին անգամ մուտք գործել ոստիկանական համակարգ: Առաջին հայացքից իրարից տարբեր թեմաները բովանդակային առումով սերտ կապի մեջ են: Ոստիկանական համակարգ մուտք գործելու ճիշտ մեխանիզմի առկայությունն է, որ թույլ կտա հետագա կրթության միջոցով ապահովել կադրային զարգացվածության աճ: Այս առումով ժամանակակից աշխարհն ընդունում է, որ ոստիկան դառնալու համար պետք է անցնել ստանդարտացված կրթական մեկ խողովակով, որը թույլ կտա հետագայում կարիերայի աճի շրջանակներում ճիշտ պատկերացնել համակարգը, ոստիկանական աշխատանքի նրբություններն ու բազմակողմանի ազդեցությունները: Ուստի, ընդունելի մոտեցում է համարվում բազային կուրսի ներդրումը, որը թույլ է տալիս Ոստիկանությունում անցնել աշխատանքի հստակ ուղղություններով և դրա հիման վրա զարգացնել գիտելիքներն ու ապահովել կարիերայի տրամաբանական աճ:

3.2. Կրթական միջավայրի ամբողջական վերափոխումը

74. Կրթական միջավայրի ամբողջական վերափոխման տեսանկյունից Պարեկային ծառայության ձևավորմամբ կադրերի ընտրության, կրթական նոր մոտեցումների կիրառումը լավ փորձառություն էր Կրթահամալիրի համար ամրապնդելու ձեռքբերումները, քաղած դասերի հաշվառմամբ կատարելագործելու փորձառությունն ու այն տարածելու ամբողջ ոստիկանական համակարգի կրթության կազմակերպման վրա: Ժամանակակից ոստիկանական կրթություն ապահովելու համար անհրաժեշտ է՝

1) Ոստիկանության կրթահամալիրի ոչ միայն անվանական, այլև բովանդակային վերափոխումը Ներքին գործերի նախարարության կրթահամալիրի.

2) ձևավորել մեկ միասնական ՆԳՆ կրթահամալիր, որը փոխլրացնող ուղղություններով կսպասարկի ՆԳՆ կադրային կարիքները և կբացառի այնպիսի ուղղություններով կրթությունը, որը հնարավոր է ստանալ հանրապետության այլ ուսումնական հաստատություններում.

3) կիրառել Կրթահամալիրի ղեկավար և վարչական անձնակազմի ընտրության և նշանակման փոփոխված կարգը՝ դուրս բերելով վերջիններիս ոստիկանական և փրկարար ծառայությունից, այդպիսով ապահովելով կառույցի քաղաքացիական ղեկավարումն ու անհրաժեշտ չափի անկախությունը Ոստիկանությունից և Փրկարար ծառայությունից.

4) մշակել ՆԳՆ կրթահամալիրի նոր կառուցվածք, որը կծառայի կադրերի պատրաստման և շարունակական կրթության պատշաճ ապահովմանը.

5) մշակել անհրաժեշտ ուղղություններով կադրերի պատրաստման և շարունակական կրթության մոդուլներն ու դրանց մատուցման մեթոդաբանությունը.

6) ներդնել առաջնորդության և կառավարման հատուկ վերապատրաստում ղեկավար պաշտոններում ընտրված ծառայողների համար՝ հատուկ ուշադրություն դարձնելով ղեկավար պաշտոններում կին ծառայողների առաջխաղացմանը: Նման վերապատրաստումներն էական նշանակություն ունեն կառույցի ներսում արդյունավետ ղեկավարության ձևավորման և պահպանման համար: Վերապատրաստումները նորանշանակ ղեկավար կազմին պետք է զինեն մենթորության, քոուչինգի և կառուցողական հետադարձ կապ տրամադրելու գործիքակազմով, ինչը կնպաստի իրենց աշխատակիցների մասնագիտական աճին.

7) զարգացնել ՆԳՆ կրթահամալիրի անձնակազմի կարողությունները և խթանել նաև պայմանագրային հիմունքներով վերապատրաստման անձնակազմի ներգրավումը՝ ապահովելով կրթության կազմակերպման թարմ շնչառությունը.

8) բարելավել ՆԳՆ կրթահամալիրի անձնակազմի սոցիալական երաշխիքները՝ ապահովելով նաև աշխատաշուկայում դասախոսական անձնակազմի մրցունակությունը.

9) շարունակել վերազինել ՆԳՆ կրթահամալիրն անհրաժեշտ տեխնիկական հագեցվածությամբ.

10) միջնաժամկետ պլանում փոփոխել Կրթահամալիրի ենթակառուցվածքը՝ այն ինտեգրելով Ակադեմիական քաղաքի կոնցեպտում:

75. Անհրաժեշտ է լրջագույն կենտրոնացում կրթության կազմակերպման ոչ թե քանակի, տարիների, այլ որակի վրա: 1 տարվա լավ գծագրված, ինտենսիվ, ինտերակտիվ կուրսն ավելի նախընտրելի է, քան 4 տարվա ոչ բավարար որակի կրթությունը: Իսկ որակ նշանակում է ներդրում կրթության մոդուլի բովանդակության, պատրաստման/վերապատրաստման անձնակազմի որակավորման, նրանց պատշաճ վարձատրության, կրթության կազմակերպման ենթակառուցվածքների, կրթության կազմակերպման համար անհրաժեշտ տեխնիկական հագեցվածության վրա: Ուստի, անհրաժեշտ է կայուն և բավարար չափով ֆինանսավորում ապահովել այնպիսի Կրթահամալիր ունենալու համար, որն ի վիճակի կլինի ապահովել կրթական անհրաժեշտ որակը:

4. ՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ՝ ՈՐՊԵՍ ԱՐՏԱՔԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄՈԴԵԼ

4.1. Պարեկային ծառայության ստեղծումը, ամբողջական ներդրումը և մասնագիտացված ջրային պարեկային ծառայության գործարկումը

76. Ոստիկանության բարեփոխումների առաջամարտիկը, այդ թվում՝ նոր ոստիկանի կերպարի ձևավորմամբ, եղել է Պարեկային ծառայությունը:

77. Պարեկային ծառայության՝ որպես արտաքին ծառայության նոր և ժամանակակից մոդելի ստեղծումն ու արդյունավետ գործունեության երաշխավորումը 2020-2022 թթ. ռազմավարության առանցքային նվաճումներից է:

78. Պարեկային ծառայության ստեղծման և ամբողջական ներդրման գործընթացը ոստիկանության ոլորտի ռազմավարական օրակարգում հենասյունային քայլերի թվին է պատկանում, քանզի Պարեկային ծառայության ձևավորման հիմքում դրված սկզբունքներն ու մոտեցումները հավակնում էին դառնալու ողջ ոստիկանական համակարգի վերափոխման հենքը, ուստի գործընթացի ճիշտ և գրագետ կազմակերպումը չափազանց կարևոր դերակատարում ուներ ոստիկանության ոլորտի բարեփոխումների հետևողական կենսագործման հարցում:

79. Պարեկային ծառայության ստեղծման նպատակով միջազգային գործընկերների ներգրավմամբ իրականացվել է լայնածավալ ուսումնասիրություն, որի հիման վրա նախանշվել են ծառայության ստեղծման անկյունաքարային լուծումները:

80. Պարեկային ծառայության ձևավորման նպատակով՝

1) հաստատվել են անհրաժեշտ օրենսդրական հիմքերը, այդ թվում՝ Պարեկային ծառայության կանոնագիրքը.

2) մշակվել է կադրերի ընտրության համար նախադեպը չունեցող բաց մրցույթի կանոնակարգը, որով սահմանված նոր չափանիշներին բավարարելու և կրթությունը հաջողությամբ ավարտելու պայմաններում քաղաքացիական անձինք և Ոստիկանության գործող ծառայողները կարող են նշանակվել Պարեկային ծառայությունում համապատասխան պաշտոնների.

3) բաց մրցույթով կադրերի ընտրության գործընթացում ամրագրվել է միջազգային գործընկերների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների և հոգեբանի մասնակցությունը.

4) մշակվել է միջազգային ստանդարտներին համապատասխան կրթական 5-ամսյա կուրս, որը կրթական նոր մակարդակ է երաշխավորել.

5) ծառայության գրավչությունն ապահովելու նպատակով նախատեսվել է բարձր աշխատավարձային քաղաքականություն.

6) իրականացվել է ծառայության ներդրման համար նյութատեխնիկական կարիքների գնահատում, որի արդյունքներով ծառայության սպառազինությունն ու նյութատեխնիկական մնացած հագեցվածությունը ներառում են ժամանակակից տեխնիկական լուծումներ:

81. Ոստիկանության բարեփոխումների այսպիսի փուլ անցած երկրների փորձառության հաշվառմամբ բաց մրցույթի շրջանակներում կադրերի հավաքագրման համար ընտրվել են հետևյալ փուլերը.

:

Հարցազրույցը հաղթահարած դիմորդներն անցնում են պարտադիր կրթական խողովակով, որը տեսական և գործնական բաղադրիչների փոխլրացնող փունջ է:

82. Նկատի ունենալով այս ծառայության համար կադրերի պատրաստման անհրաժեշտ ժամանակահատվածը և այլ պետություններում նմանատիպ նոր ծառայությունների ներդրման պրակտիկան՝ որդեգրված մոտեցմամբ ծառայության գործարկումն իրականացվել է փուլային սկզբունքով: 2021 թվականի հուլիսի 7-ից ծառայությունը մեկնարկել է Երևանում, 2022 թվականի ապրիլի 16-ին՝ Լոռիում և Շիրակում, 2023 թվականի հունվարի 23-ին՝ Արագածոտնում, Կոտայքում, Տավուշում և Գեղարքունիքում, 2023 թվականի հոկտեմբերի 28-ին՝ Արարատում, Արմավիրում, Սյունիքում և Վայոց ձորում:

83. Հանրապետությունում պարեկային ծառայության ներդրմանը զուգահեռ 2022 թվականի ընթացքում մշակվել է նաև պարեկային մասնագիտացված ծառայության՝ ջրային պարեկային ծառայության ներդրման հայեցակարգը: Հայեցակարգի հիման վրա ձեռնարկվել են լայնամասշտաբ աշխատանքներ հանրապետությունում նախադեպը չունեցող ծառայության ձևավորման համար:

84. Ջրային պարեկային ծառայության բարդ ու ունիվերսալ գործառույթները նկատի ունենալով՝ ծառայության համար կադրերն ընտրվել են գործող պարեկների շարքից, որոնք արդեն իսկ պատկերացում ունեն ծառայության գաղափարախոսության, գործառույթների մասին և ունեն նաև պրակտիկ փորձ, ինչը կդյուրինացնի մեկ մակարդակ ավելի վտանգավոր ծառայության կազմակերպումը: Կադրային հավաքագրմանը հաջորդել են ջրային պարեկային ծառայությունում աշխատանքի անցնելու համար մրցույթներն ու ստուգարքները: Դրան հաջորդել է ՆԳՆ կրթահամալիրում ԱՄՆ դեսպանատան աջակցությամբ կազմակերպված պարեկների բազային վերապատրաստման գործընթացը, ինչի շրջանակում նրանք տեսական ու գործնական պարապմունքների ընթացքում ծանոթացել են օրենսդրությանն ու իրավակարգավորումներին, նաև անցել են ֆիզիկական, կրակային պարապմունքներ, զարգացրել նավավարման, առաջին օգնության

ցուցաբերման և շատ այլ հմտություններ, երկրորդ փուլով վերապատրաստվել են անմիջապես Սևանա լճում: Հետագայում արդեն իսկ ծառայություն իրականացնող ջրային պարեկների կարողությունների կատարելագործման և գիտելիքների ամրապնդման նպատակով ԱՄՆ դեսպանատան թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության գրասենյակի կողմից կազմակերպվել է նաև ջրային պարեկների ընդլայնված վերապատրաստման դասընթաց: Կարևորելով պարբերական վերապատրաստումները և շարունակական մասնագիտական աճը՝ նախատեսվում է, որ ընդլայնված վերապատրաստման դասընթացը պետք է անցնեն բոլոր ջրային պարեկային ծառայողները:

85. Արդյունքում՝ 2023 թվականի դեկտեմբերի 9-ին Սևանա լճում և առափնյա հատվածում գործարկվել է ջրային պարեկային ստորաբաժանումը: Անվտանգ ու ապահով Սևանա լիճ ունենալու տեսլականի իրականացման ճանապարհին նոր ստորաբաժանման գործարկման առաջին իսկ օրվանից ծառայության դրական արդյունքները սպասեցնել չտվեցին. ջրային պարեկներն արդեն իսկ բացահայտել են ոչ միայն ապօրինի ձկնորսության, այլև տարբեր այլ հանցագործությունների շուրջ 90 դեպք, նաև արձանագրել են վարչական իրավախախտումներ:

86. Ամփոփելով՝ Պարեկային ծառայությունը, որպես արտաքին ծառայության նոր և ժամանակակից մոդել, 2023 թվականի վերջին արդեն ամբողջությամբ ներդրվել է Հայաստանի ամբողջ տարածքում: Այժմ պարեկային ծառայությունն ունի ամբողջովին նոր նյութատեխնիկական հագեցվածություն, ժամանակակից ոստիկանական կրթություն ստացած անձնակազմ, որը պրակտիկայում տպավորիչ արդյունքներ է գրանցել և շարունակում է գրանցել:

87. Միջազգային հարցումների, վիճակագրական ցուցիչների արդյունքները, հասարակական լայն կարծիքի և արտաքին ծառայություն իրականացնելիս պարեկային ծառայողների նկատմամբ ամենօրյա վստահության հետ միասին ցույց են տալիս, որ բարեփոխումները հաջողություն են գրանցել՝ հասնելով փոփոխությունների ակունքներում դրված հիմնական նպատակներից մեկին: Ներկայումս Պարեկային ծառայությունն ավելի շատ համայնքահեն ծառայություն է իրականացնում, քան երբևէ նախորդ տասնամյակներում՝ սույնով իսկ վայելելով հասարակության առավել լայն ճանաչումն ու աջակցությունը: Նշվածից զատ, Պարեկային ծառայության աշխատանքի ընթացիկ գնահատումը փաստում է նաև, որ Պարեկային ծառայության աշխատակիցների շրջանում կոռուպցիոն ռիսկերը նվազագույնի են հասցվել: Վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ 2021-2023 թվականների ընթացքում Երևանում կաշառքի փորձ կատարելու 59 դեպք է գրանցվել, իսկ մարզերում՝ 16 դեպք, երբ Պարեկային ծառայության աշխատակիցները բերման են ենթարկել իրենց կաշառելու փորձ կատարած անձանց: Կոռուպցիոն ռիսկերի նվազեցումը չափազանց կարևոր է օրենքի գերակայության պահպանման, մարդու իրավունքների պաշտպանության, հանցագործությունների արդյունավետ կանխարգելման և բացահայտման, հանրային վստահության ձևավորման և ինստիտուցիոնալ ամբողջականության պահպանման համար: Սա ամենամեծ ձեռքբերումն է ոչ միայն ՀՀ ոստիկանության, այլ նաև ՀՀ կառավարության համար՝ մի կողմից

կոռուպցիայի դեմ համակարգային պայքարի, մյուս կողմից՝ հանրային ընկալումն ու մշակույթը փոխելու դիտանկյունից:

88. Պարեկային ծառայության աշխատանքի արդյունքներով գնահատվել են ինչպես ձեռքբերումները, այնպես էլ բացթողումները: Պարեկային ծառայության աշխատանքին զուգահեռ քաղաք դասերի տրամաբանության մեջ փոփոխություններ են կատարվել նրանց կրթության կազմակերպման գործընթացում՝ զարգացնելով այն: Յուրաքանչյուր հերթական ընդունելությանը գնահատվել են կրթության կազմակերպման ուժեղ և թույլ կողմերը, դրանց հաղթահարման ուղղությամբ ձեռնարկվել են քայլեր՝ նախապատրաստվելով հերթական հաջորդ ընդունելությանը: Արդեն իսկ մեկ անգամ վերանայվել է «Պարեկ» որակավորման պետական կրթական չափորոշիչը, կրթական բաղադրիչ են դարձել սցենարների վրա հիմնված վերապատրաստումները, մենթորության ծրագիրը, ծառայության ընթացքում իրականացվել է կադրերի շարունակական կրթություն:

4.2. Պարեկային ծառայության զարգացման նոր փուլը

89. Ներկայումս, երբ Պարեկային ծառայությունն արդեն իսկ ծածկում է ողջ հանրապետությունը, հույժ կարևոր է գնահատել, թե ինչ ձեռքբերումներ են առկա, և որոնք են բարելավման կամ վերանայման ենթակա ոլորտները: Այդ նպատակով Ներքին գործերի նախարարությունն ԱՄՆ դեսպանատան թմրամիջոցների և իրավապահ համագործակցության (ԹՊԻՀ) գրասենյակի աջակցությամբ ԱՄՆ Արդարադատության դեպարտամենտի Միջազգային քրեական հետաքննությունների վերապատրաստման աջակցության ծրագրի (ICITAP) հայաստանյան առաքելությանը պատվիրակել է իրականացնել Պարեկային ծառայության համապարփակ և մանրակրկիտ գնահատում՝ ընդգրկելով բոլոր ուղղությունները՝ օրենսդրություն, կառուցվածք, ղեկավարություն, մարդկային ռեսուրսներ, նյութատեխնիկական ապահովում, գործառնություններ/ծառայության կազմակերպում, վերահսկողություն և այլն:

90. Նշյալ գնահատման առանցքային տարրերից են Պարեկային ծառայության ձեռքբերումների ու հաջողությունների վերհանումը, ինչպես նաև առկա օբյեկտիվ և սուբյեկտիվ բացերի որոշարկումն ու այդ բացերը զարգացման ծրագրի թիրախային տարր դարձնելը: Գնահատումը հիմք կծառայի առաջիկա 3-4 տարիների ընթացքում Պարեկային ծառայության զարգացման երկրորդ փուլի մշակման համար՝ որպես Պարեկային ծառայության կայացման և բարելավման միջնաժամկետ ռազմավարություն:

5. ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԵԿ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՕՊԵՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ (112) ՍՏԵՂԾՈՒՄ

5.1. Ճգնաժամային իրավիճակներում արագ արձագանքման և օգնության տրամադրման հանրապետական միասնական արդյունավետ համակարգի ներդրում՝ միավորելով Ոստիկանության (1-02), Փրկարար ծառայության (911) և Շտապ օգնության (1-03) օպերատիվ կենտրոնները

91. Պարեկային ոստիկանության կողմից տուժողներին արագ օգնության հասնելու և որակյալ, անհետաձգելի բժշկական, հոգեբանական օգնություն ցուցաբերելու, իրավախախտումները կանխելու ու խափանելու, իրավախախտում կատարած անձանց հայտնաբերելուն աջակցելու կարողությունների զարգացման համար Ոստիկանության բարեփոխումների 2020-2022 թթ. ռազմավարության շրջանակներում, ի թիվս այլ միջոցառումների, նախատեսվել էր Օպերատիվ կառավարման կենտրոնի ստեղծումը:

92. 2023 թվականին Ոստիկանության բարեփոխումների կարևորագույն նվաճումների շարքում կարելի է առանձնացնել յուրաքանչյուր մարզում Պարեկային ծառայությանը զուգահեռ նաև ծառայության գործունեությանն օժանդակող Օպերատիվ կառավարման կենտրոնների ձևավորումը: Օպերատիվ կառավարման կենտրոնը իրավախախտումների և պատահարների վերաբերյալ հաղորդումներն ու ահազանգերն ընդունող միասնական օպերատոր է, որն այդ հաղորդումների բնույթի վերլուծության հիման վրա ապահովում է պարեկային ոստիկանության ուժերի և միջոցների կառավարումը, պարեկային կարգախմբի մոտեցումը՝ դժվարին իրավիճակում հայտնված անձանց կարճ ժամանակահատվածում Ոստիկանության աջակցության ցուցաբերման նպատակով, իսկ անհրաժեշտության դեպքում՝ տալիս է անհրաժեշտ խորհրդատվություն: Կենտրոնն ունի տեղեկատվական վերլուծության հնարավորություններ, ինչպես նաև Փրկարար ծառայության (911) և Շտապ օգնության (1-03) օպերատիվ կենտրոնների մշտական հենակետեր:

93. Կենտրոնի խնդիրներն են՝

1) իր իրավասության սահմաններում հանրապետության օպերատիվ իրավիճակի շուրջօրյա վերահսկումը.

2) Պարեկային ծառայության օպերատիվ կառավարումը.

3) քաղաքացիներից ստացված ահազանգերի սպասարկումը.

4) դեպքի վայրում ուժերի օպերատիվ կառավարումը, առկա ուժերի բավարարության գնահատումը, լրացուցիչ ուժերի ներգրավումը.

5) օպերատիվ կառավարման բնագավառում տեղեկատվական շտեմարանների ստեղծումը և դրանց արդիականացումը.

6) Ոստիկանությանն անհրաժեշտ տեղեկատվական, վերլուծական նյութերով, շտեմարաններով ապահովելը.

7) հանցավորության (նաև վարչական իրավախախտումների) մակարդակի ուսումնասիրությունը և վերլուծությունը.

8) հանցավորությունը (նաև վարչական իրավախախտումներ) ծնող պատճառների, ռիսկերի ուսումնասիրությունը և դրանց վերացմանն ուղղված առաջարկների ներկայացումը.

9) արտաքին ծառայություն իրականացնող ստորաբաժանումներին մեթոդական օժանդակության ցուցաբերումը, ծառայության որակի բարձրացմանն ուղղված առաջարկների ներկայացումը.

10) մշտադիտարկման արդյունքում ձեռք բերված տվյալների մշակումը և դրանց ամփոփումը, հետևանքների հնարավորինս ճշգրիտ կանխատեսումն ու մոդելավորումը:

94. Միաժամանակ Ոստիկանության բարեփոխումների 2020-2022 թթ. ռազմավարությամբ նախատեսված էր քննարկման առարկա դարձնել նաև Արտակարգ իրավիճակների նախարարության Ճգնաժամային կառավարման կենտրոնի և Շտապ օգնության հետ Ոստիկանության օպերատիվ կենտրոնի միավորման հարցը՝ ստեղծելով արտակարգ իրավիճակներում համապատասխան գերատեսչությունների կողմից արագ արձագանքման և օգնության տրամադրման արդյունավետ համակարգ, որը կընդգրկի ամբողջ պետության տարածքը: Փոքր, դեպի ծով ելք չունեցող երկրի պայմաններում այսպիսի միավորումը իրագործելի է և կհանգեցնի աշխատանքների իրականացման և նյութատեխնիկական բազայի օգտագործման ավելի լավ համակարգման արտակարգ իրավիճակների ժամանակ:

95. Օպերատիվ կառավարման կենտրոնի գործունեության փորձն արդեն իսկ ապացուցել է, որ նման գործառույթներ իրականացնող ստորաբաժանման առկայությունը զգալիորեն նպաստում է Պարեկային ծառայության կողմից իր գործունեության առավել պատշաճ իրականացմանը և անհրաժեշտ իրավիճակներում օպերատիվ արձագանքմանը: Հաշվի առնելով Օպերատիվ կառավարման կենտրոնի, ինչպես նաև արտակարգ իրավիճակներում արագ արձագանքման և շտապ օգնության միջազգային լավագույն փորձը՝ Ներքին գործերի նախարարությունը նախատեսում է նոր ռազմավարության շրջանակներում ձեռնամուխ լինել ահազանգերի ընդունման և օպերատիվ կառավարման միասնական կենտրոնի ստեղծմանը: Ճգնաժամային կառավարման կենտրոնի, Շտապ օգնության և Օպերատիվ կառավարման կենտրոնի միավորման արդյունքում նոր կենտրոնի ստեղծման հայեցակարգն արդեն իսկ հաստատվել է, մշակվում է նոր կենտրոնի ստեղծման աշխատանքային ծրագիրը:

96. Ներկայումս, կախված իրավիճակի բովանդակությունից, քաղաքացին ինքը պետք է որոշի, թե առկա տարբերակներից արագ արձագանքման որ հեռախոսահամարով պետք է զանգահարի: Կանչերին պատասխանելու և մշակելու զանգերի կենտրոնների՝ կարգավարական (դիսպետչերական) կենտրոնների արագությունը զանգերին պատասխանելիս, ինչպես նաև դեպքերի մասին տեղեկատվության հավաքման և արձագանքող ստորաբաժանումներին դրա տրամադրման որակն ազդում են անհետաձգելի օգնության ծառայությունների (առաջին արձագանքողների) ժամանման արագության վրա: Առաջին արձագանքողների ժամանման արագությունը և տարբեր ծառայությունների

միջև համագործակցության ապահովումն առանցքային գործոններ են ճգնաժամերի լուծման, առողջությանը, գույքին և շրջակա միջավայրին հասցված վնասը նվազագույնի հասցնելու, ինչպես նաև ճգնաժամային իրավիճակներում հայտնված անձանց օգնելու համար:

97. Արտակարգ իրավիճակների կանչերի արձագանքման արդյունավետ գործող համակարգի ստեղծումը պահանջում է ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների համակարգերի ավելի լայն կիրառում: Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների նոր լուծումների կիրառումն ու պահպանումը ռեսուրսներ են պահանջում: Այդ ուղղությամբ եվրոպական մի շարք երկրներ բարեփոխումներ են իրականացրել՝ բարելավելու արտակարգ իրավիճակների զանգերին պատասխանելու և մշակելու գործելակարգերը և ընդլայնելու իրենց տեխնոլոգիական աջակցությունը՝ ստեղծելով միջգերատեսչական կարգավարական կենտրոններ:

98. Հայաստանի Հանրապետությունում արտակարգ իրավիճակների կանչերի համակարգը գործում է ամենօրյա ռեժիմով (գործում են արտակարգ իրավիճակների ազգային հեռախոսահամարները՝ 101, 102 և 103, ինչպես նաև 112 և 911 հեռախոսահամարները), սակայն ունի զգալի թույլ կողմեր, և առանց լուրջ վերակազմավորման հնարավոր չէ նկատելիորեն բարձրացնել կանչերի արձագանքման և մշակման համակարգի կամ ճգնաժամային արձագանքման գերատեսչությունների համագործակցության արդյունավետությունը: Գործող համակարգի հիմնական թերություններից է այն, որ մեծ թվով արտակարգ իրավիճակների կանչերի հեռախոսահամարները հանգեցնում են նրան, որ օգնության կարիք ունեցողների համար կարող է դժվար լինել արագ կողմնորոշվել, թե որ շտապ կանչի համարով պետք է զանգահարել կոնկրետ դեպքում, իսկ սխալ համարով զանգահարելը կարող է հանգեցնել օգնության հետաձգման: Կարող են լինել նաև իրավիճակներ, երբ անձն անհրաժեշտությունից ելնելով զանգեր է կատարում միևնույն միջադեպի առնչությամբ մի քանի շտապ կանչերի հեռախոսահամարներով, ինչը լրացուցիչ ծանրաբեռնվածություն առաջացնող իրավիճակ է, որը պետք է բացառել: Մեկ այլ խնդիր է նաև տարբեր գերատեսչությունների ենթակայության տակ գտնվող և միմյանցից անկախ գործող կարգավարական կենտրոնների միջև ոչ արդյունավետ հաղորդակցությունը այն իրավիճակներում, երբ մի քանի ծառայություններ պետք է միաժամանակ արձագանքեն ճգնաժամին (օրինակ՝ ճանապարհատրանսպորտային պատահարի դեպքում): Անխուսափելիորեն նման դեպքերում մեկ ստորաբաժանման կարգավարական կենտրոնի կողմից հավաքագրված օպերատիվ տեղեկատվությունը ոչ միաժամանակ է հասնում բոլոր արձագանքողներին՝ ուշացնելով անհրաժեշտ օգնության ցուցաբերումը:

99. Միևնույն ժամանակ, տարբեր գերատեսչությունների կարգավարական կենտրոնները կատարում են նույնատիպ գործառույթներ՝ պատասխանում են արտակարգ իրավիճակների կանչերին, արագ մշակում դրանք և փոխանցում առաջին արձագան-

քողներին, ընդ որում՝ իրենց գործունեության համար պահանջվում են հատուկ աշխատանքային միջավայր, անձնակազմ և մասնագիտացված տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիական համակարգեր: Կառավարման նման մոդելը հաճախ հանգեցնում է մարդկային ռեսուրսների, տեխնոլոգիաների և աշխատանքային այլ գործիքների անարդյունավետ օգտագործմանը:

100. Այդ խնդիրները լուծելու համար, մի շարք երկրների (Էստոնիա, Ֆինլանդիա, Շվեդիա, Լիտվա, Իսլանդիա, Վրաստան) օրինակին հետևելով, լայնածավալ բարեփոխումներ են իրականացվելու՝ տարբեր գերատեսչությունների կողմից սպասարկվող տարբեր կանչերի համարների փոխարեն նախատեսելով բնակչությանը լավ հայտնի արտակարգ իրավիճակների կանչերի մեկ հեռախոսահամար, որի սպասարկումը կիրականացնի Ներքին գործերի նախարարության համապատասխան ստորաբաժանումը: Ահազանգերի ընդունման և օպերատիվ կառավարման միասնական կենտրոնի ստեղծման նպատակով սույն ռազմավարության շրջանակներում նախատեսվում է նաև զանգերի կենտրոնի աշխատակիցների համար մշակել հատուկ մեթոդաբանություն և անցկացնել ուսուցում: Այս բարեփոխումների նպատակն է դարձնել ճգնաժամային արձագանքման համակարգը բնակչության համար ավելի հասկանալի, ավելի պարզ, արագ և արդյունավետ՝ օգնություն տրամադրելու հարցում, բարելավել միջգերատեսչական համագործակցությունը, ինչպես նաև արձագանքման համար պատասխանատու պետական մարմինների աշխատանքի որակի բարձրացման և պետության ռեսուրսների խնայողության համար ստեղծել կանչերի ընդունման, արձագանքման, դրանց մշակման և համակարգի կառավարման արդյունավետ մոդել:

101. Միասնական կենտրոնի ստեղծմանը պետք է հաջորդի նաև արտակարգ իրավիճակների դեպքում տրանսպորտային միջոցից կարգավարական կենտրոն զանգելու ավտոմատ համակարգի (e-call) և խոսքի և լսողության խնդիրներ ունեցող անձանց համար ծառայությունների (օրինակ՝ SMS-ի միջոցով) ներդրման հնարավորությունների դիտարկումը՝ կենտրոնի հետագա շարունակական բարեփոխումն ապահովելու համար:

6. ՔՐԵԱԿԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ, ՕՊԵՐԱՏԻՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ

6.1. Ոստիկանության դերը քրեական արդարադատության ոլորտի զարգացումների համատեքստում

102. 2022 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ է մտել Քրեական դատավարության նոր օրենսգիրքը, որը քրեական արդարադատության շղթայում էական վերադասավորումներ է ապահովել: Հատկանշական է, որ դատավարական օրենսգրքի ընդունմամբ

ընտրվել է նաև քրեական գործերով մինչդատական վարույթի իրականացման եղանակը և քննչական մարմինների համակարգի նոր մոդելը, որը հանգում է հետևյալին՝

1) վերացվել է քրեական գործի հարուցման (նյութերի նախապատրաստման) փուլը. այն ներառվել է նախաքննության՝ որպես մինչդատական վարույթի իրականացման միակ եղանակի, բովանդակության մեջ.

2) փոխվել է «հետաքննություն» և «նախաքննություն» սահմանադրական հասկացությունների քրեադատավարական հարաբերակցությունը, օպերատիվ-հետախուզական գործունեությունն ինկորպորացվել է քրեական դատավարության օրենսգիրք՝ այն նույնացնելով հետաքննության հետ.

3) հետաքննությունը կոչվել է օժանդակելու նախաքննության առջև դրված խնդիրների լուծմանը.

4) փուլային սկզբունքով կոնսոլիդացվել են քննչական մարմիններն այն տրամաբանությամբ, որ հանրապետությունում գործեն ընդամենը 2 քննչական մարմիններ, որից մեկը կլինի ունիվերսալ՝ Քննչական կոմիտեն, մյուսը՝ հակակոռուպցիոն մասնագիտացմամբ՝ Հակակոռուպցիոն կոմիտեն:

103. Մոդելային նման զարգացումների լույսի ներքո Ոստիկանությունն այսօր հանդես է գալիս որպես օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող (հետաքննության) մարմին: Ուստի, 2020-2022 թթ. ռազմավարությամբ նախանշված մոտեցումները նոր իրողությունների պայմաններում այլևս տեսանելի ապագայում իրագործելի չեն կարող լինել:

104. Նկատի ունենալով նշվածը և օպերատիվ-հետախուզական աշխատանքի դերին ու նշանակությանը պատշաճ գնահատական տալով՝ անհրաժեշտ է լրջորեն վերափոխել օպերատիվ-հետախուզական աշխատանքի իրականացման մասին պատկերացումները, մեթոդաբանությունն ու երաշխավորել պրակտիկայում վերջինիս ճիշտ դիրքավորումը:

105. Սակայն պետք է ընդունել, որ հանրային ակնկալիքն ավելի լայն է, քան միայն օպերատիվ-հետախուզական աշխատանքը: Հետևապես, ռազմավարական մակարդակում անհրաժեշտ է ունենալ հանցավորության կանխարգելման շղթայում ներգրավված բոլոր դերակատարների որոշարկում, հստակ դերաբաշխում և թիրախային միջոցառումների պլանի մշակում, որը կուժեղացնի հանրապետությունում կանխարգելիչ աշխատանքի դերն ու նշանակությունը:

106. Հույժ կարևոր է, որ հանցավորության դեմ պայքարի մոտեցումները վերագնահատելիս լուծումները խարսխվեն ապացուցահեն մեթոդաբանությամբ, հետագա վերլուծությունները հենվեն արժանահավատ վիճակագրության վրա, ինչը ոլորտային քաղաքականությունների ճիշտ ձևավորման գրավականն է:

107. Վերը նշվածի համատեքստում ամբողջովին վերափոխվել է Ոստիկանության հենասյունային ուղղություններից մեկը համարվող Քրեական ոստիկանությունը:

108. Ինչպես ընդգծվեց Պարեկային ծառայությանն անդրադառնալիս, Պարեկային ծառայության ձևավորման հիմքում ընկած լուծումները դրական փորձի դեպքում պետք է հավակնեին դառնալու ոստիկանական վերափոխվող ստորաբաժանումների նկատմամբ կիրառելի և երաշխավորեին իրենց ինստիտուցիոնալացումը: Հենց այս տրամաբանությամբ էլ Պարեկային ծառայության օրինակով փոխվեց Քրեական ոստիկանության ընդունելության կարգը, կրթության կազմակերպումը, կառավարման մոդելը, որի արդյունքում՝

1) Ոստիկանության բարեփոխումները համակարգող խորհրդի կողմից մշակվել և հաստատվել էր Քրեական ոստիկանության վերափոխման տեսլականը, որոշարկվել են կառուցվածքը, տարածքային ստորաբաժանումների տիպային 3 մոդելները.

2) օրենսդրական մակարդակում ընդունվել է Քրեական ոստիկանության ֆունկցիոնալ պատկերն արտացոլող՝ քրեական ոստիկանի պաշտոնի նշանակման համար ընդունելության նոր կարգը՝ քաղաքացիական անձանց ևս հնարավորություն տալով մասնակցել բաց մրցույթին.

3) բաց մրցույթի մանրամասները սահմանվել են Պարեկային ծառայության օրինակով՝ նախատեսելով կադրերի հավաքագրման նույնական կարգ.

4) բաց մրցույթ անցկացվել է, կադրերի հավաքագրման գործընթացին մասնակցել են թե՛ միջազգային գործընկերները, թե՛ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները: Պարտադիր մասնակցություն է ունեցել նաև հոգեբանը՝ դիմորդի հոգեբանական պատկերի գնահատման նպատակով.

5) բաց մրցույթի արդյունքներով թե՛ քաղաքացիական անձինք, թե՛ գործող ոստիկաններն անցել են պարտադիր կրթական կուրս, որի արդյունքներն են որոշարկել պաշտոնների նշանակումը. հաստատվել է պետական կրթական չափորոշիչը.

6) կրթության ավարտին համապատասխան պաշտոններին նշանակումներն ապահովելով՝ Քրեական ոստիկանությունը գործարկվել է 2024 թվականի նոյեմբերի 1-ին՝ նոր կառուցվածքով և կառավարման նոր սխեմայով՝ խառը կառավարումից անցնելով ուղղաձիգ կառավարման:

6.2. Քրեական ոստիկանության զարգացման անհրաժեշտ նախադրյալները

109. Քրեական արդարադատության ոլորտում վերջին զարգացումներին համահունչ վերափոխված Քրեական ոստիկանության ինստիտուցիոնալ զարգացումն ապահովելու նպատակով անհրաժեշտ է՝

1) մշակել հանցավորության կանխարգելման գործողությունների համալիր ծրագիր՝ բոլոր դերակատարների ներգրավմամբ.

2) մշակել «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ամբողջությամբ նոր օրենք, որը կհամապատասխանի միջազգային ստանդարտներին և ունակ կլինի

ապահովելու հանցավորության արդի մարտահրավերներին դիմակայելու համար անհրաժեշտ գործիքակազմ: Նոր օրենքը պետք է համապարփակ կերպով հասցեագրի գործող օրենսդրության բացերն ու խնդիրները, այդ թվում՝ նախատեսելով մարդու իրավունքների նկատմամբ հարգանքն ու պաշտպանությունն ապահովող չափանիշների ընդունումը, վերանայելով օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների գործիքակազմը, օպերատիվ-հետախուզական միջոցների բնույթը և դրանց իրականացման մեթոդաբանությունը և այլն.

3) վերանայել հանցավորության ոլորտում վարվող վիճակագրությունը՝ երաշխավորելով հանրապետական մակարդակում դրա արժանահավատությունը, հուսալիությունն ու արդիականությունը: Այս համատեքստում կարևոր է Ոստիկանության Ինֆորմացիոն կենտրոնի ամբողջական վերափոխումը և թվայնացումը.

4) ապահովել Ոստիկանության հենասյունային ուղղությունների միջև տվյալների ավտոմատ փոխանակումը, որը թույլ կտա բարձրացնել աշխատանքի օպերատիվությունն ու արդյունավետությունը.

5) Քրեական ոստիկանության գործարկման հիմքում դրված կրթական գործընթացը համարել բազային և շարունակել տարեկան կտրվածքով Քրեական ոստիկանության անձնակազմի կարողությունների զարգացումը, այդ թվում՝ քրեական արդարադատության շղթայում ընդգրկված բոլոր դերակատարների հետ համատեղ վերապատրաստումների միջոցով, ինչը թույլ կտա հանցավորության դեմ պայքարն ինստիտուցիոնալ և գործնական մակարդակում դիտարկել մեկ միասնական նպատակ և ջանքերն օգտագործել փոխլրացնող կերպով.

6) զարգացնել միջազգային կառույցների, գիտավերլուծական հաբերի, կոնտակտային կետերի միջև համագործակցությունը:

7. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԻՄԱՍՏԱՎՈՐՈՒՄ

7.1. Համայնքային ոստիկանության գործող մոդելի վերանայման նոր տեսլականը

110. Ոստիկանության ոլորտի բարեփոխումների ռազմավարության և դրա իրականացման 2020-2022 թթ. գործողությունների ծրագրում նախատեսված էր Համայնքային ոստիկանության գործառույթների վերանայում և Պարեկային ծառայության կողմից գործառույթի սպասարկման հնարավորություն:

111. Գործառույթների վերանայման շրջանակներում իրականացվել է Համայնքային ոստիկանության գործառույթների աուդիտ, որը թույլ է տվել Համայնքային ոստիկանության համար նախանշել գործառույթների այնպիսի համադրություն, որը մի կողմից բացառում է տարբեր պետական մարմինների և հենց Ոստիկանության ներսում

տարբեր ստորաբաժանումների միջև գործառույթների կրկնությունները, մյուս կողմից՝ Ոստիկանության համակարգում տեսանելի դիրքավորում ապահովում:

112. Գործառութային աուդիտի և Ոստիկանության համակարգում գործառութային վերադասավորումների հիման վրա Համայնքային ոստիկանության համար առանձնացվել են հետևյալ հիմնական ուղղությունները՝

1) ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելում, ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանություն, ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձանց հաշվառում և կանխարգելիչ աշխատանքների իրականացում.

2) անչափահասների կողմից կատարվող հանցանքների և այլ իրավախախտումների կանխարգելում՝ առանձնակի ուշադրություն դարձնելով թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի գործածման կանխարգելմանը.

3) անհատական կանխարգելիչ բնույթի աշխատանքների իրականացում հաշվառման մեջ գտնվող անձանց հետ.

4) ոչ մեծ և միջին ծանրության հանցանքների հայտնաբերում, բացահայտում, հետախուզվողների հայտնաբերում:

113. Ռազմավարության իրականացման 2020-2022 թթ. շրջափուլի շրջանակներում Ոստիկանության բարեփոխումները համակարգող խորհրդի նիստում քննարկման առարկա է դարձել Պարեկային ծառայության կողմից Համայնքային ոստիկանության գործառույթների իրականացման նպատակահարմարության հարցը:

114. Նկատի ունենալով Պարեկային ծառայության փուլային ներդրման ընթացքը, որն ավարտվել է 2023 թվականի տարեվերջին, և այն, որ ծառայության ներդրման փուլին զուգահեռ և դրանից հետո պետք է շարունակվի զարգացման երկրորդ փուլը՝ ընդունելի է համարվել Ոստիկանության կառուցվածքում համայնքային ոստիկանությունը որպես առանձին ստորաբաժանում պահպանելու տարբերակը, որն ավելի հստակ գործառութային բազայով և փոխլրացնող կերպով կհամագործակցի Ոստիկանության հենասյունային մյուս երեք ուղղությունների հետ՝ արդյունավետորեն ապահովելով իր առջև դրված խնդիրների կատարումը:

115. Իհարկե անկախ ստորաբաժանման անվանումից Ոստիկանության բոլոր ստորաբաժանումների գործունեությունը պետք է հենվի համայնքամետ գործունեության ծավալման սկզբունքի վրա: Առավելապես այս սկզբունքը տեսանելի է հանրության հետ շփման ավելի լայն դաշտ ունեցող ստորաբաժանումների մասով, ինչպիսին հենց Համայնքային ոստիկանությունն է: Ավելի ապահով, անվտանգ և դիմակայուն համայնքների տեսլականն ուղենշում է համայնքամետ ծառայության առաջնահերթությունները՝ հանցավորության կանխարգելում, հանցավորության թվի կրճատում, խնդիրների լուծում, համայնքային դրական հարաբերությունների և ներգերատեսչական ու միջգերատեսչական համագործակցության խթանում:

116. Հանցավորության թվի կրճատման և անվտանգային հարցերի հասցեագրման վրա համայնքամետ ծառայության ազդեցությունն ուժեղացնելու, ինչպես նաև հանրային վստահության աճի միջոցով համայնքի անդամների հետ կապերի հզորացման նպատակով անհրաժեշտ է ապահովել բազմաֆունկցիոնալ համայնքային ծառայության մոտեցումը: Այս մոտեցումը հեշտացնում է որոշումների ավելի արագ կայացումը, օպտիմալացնում է ռեսուրսների բաշխումը և համապարփակ մոտեցում է ցուցաբերում անվտանգային խնդիրները լուծելիս: Ավելին, բազմաֆունկցիոնալ Համայնքային ոստիկանության ծառայողների հմտությունների բազմազանությունը նրանց հնարավորություն է տալիս ավելի լավ հասկանալ բարդ խնդիրները և կիրառել համապատասխան լուծումներ: Բացի այդ, նրանք դառնում են շփման մեկ միասնական կետ տարբեր մտահոգությունների համար՝ խթանելով օգնություն փնտրող համայնքի անդամների համար հասանելիությունն ու հարմարավետությունը: Սա բարձրացնում է համայնքի վստահությունը, քանի որ մարդիկ համայնքին մոտ կանգնած ոստիկանին համարում են պատասխանատու և հագեցած՝ լուծելու իրենց կյանքի վրա ազդող հարցերի լայն շրջանակ:

117. Ըստ այդմ, ռազմավարական մակարդակում վերը նշված հիմնական ուղղությունների իրականացման համար Համայնքային ոստիկանությունը տարածքային մակարդակում ունի ոչ թե նեղ մասնագիտացված ստորաբաժանումներ, այլ բազմաֆունկցիոնալ ծառայողներ, որոնք կծածկեն բոլոր գործառույթները:

118. Գործառույթների եզակիության ապահովման խնդրից զատ կարևոր է հստակեցված գործառույթների իրականացման մեթոդաբանությունը, որը պետք է երաշխավորի համայնք-ոստիկան հարաբերությունների սերտացումը, վստահության բարձրացումը: Մեթոդաբանության ճշգրիտ կիրառման համար առանցքային են Համայնքային ոստիկանության մասնագիտական կարողությունների զարգացումը և անհրաժեշտ գործիքակազմով հագեցվածությունը:

119. 2024 թվականի նոյեմբերի 1-ին ձևավորված նոր նկարագրով Համայնքային ոստիկանության գործունեության արդյունավետության ապահովման շրջանակներում անհրաժեշտ է՝

1) համայնքային բազմաֆունկցիոնալ ոստիկանին կրթել հենց այդ մեթոդաբանությամբ.

2) համայնքային բազմաֆունկցիոնալ ոստիկանի կերպարը թղթային աշխատանք կատարողից վերափոխել հանրությանը, համայնքին ավելի մոտ կանգնած, համայնքի խնդիրներին ավելի արագ արձագանքող ոստիկանի կերպարի, ինչը նշանակում է գործառնական ընթացակարգերի էական փոփոխություն, աշխատանքի թվայնացում.

3) նախատեսել համայնքի հետ շփման ժամանակակից լուծումներ (առցանց համայնքային ֆորումներ, վիրտուալ համայնքային խմբեր, հեռախոսային հավելվածներ, սոցիալական հարցումներ հետադարձ կապի համար և այլն).

4) համայնքային ոստիկանին փուլային սկզբունքով ազատել ոչ տիպիկ գործառույթների իրականացումից (ուղեկցումներ, ծանուցումներ, պարտապանի հետախուզում և հայտնաբերում և այլն), որը թույլ կտա առավելապես կենտրոնանալ համայնքի հետ աշխատանքի վրա.

5) համայնքային բազմաֆունկցիոնալ ոստիկանի թափանցիկ և հաշվետու գործելաոճի համար նյութատեխնիկական հագեցվածության ապահովում՝ հատկապես կրծքին ամրացվող տեսախցիկների տեսքով, թվային աշխատանքի համար անհրաժեշտ դյուրակիր համակարգիչներով:

8. ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՐՔԵՐԻ ՎԵՐԱՓՈԽՈՒՄ, ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՎԱՐԴԻԱՅԻ ՍՏԵՂԾՈՒՄ

8.1. Ոստիկանության զորքերի վերափոխում, Ոստիկանության գվարդիայի ստեղծում

120. «Ոստիկանության զորքերի մասին» օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ ոստիկանության զորքերի խնդիրներն են՝

1) հասարակական կարգի պահպանությանը և հասարակական անվտանգության ապահովմանը մասնակցելը.

2) հատուկ և կարևորագույն օբյեկտների պահպանումը ու հատուկ բեռների տեղափոխման անվտանգության ապահովումը.

3) ռազմական և արտակարգ դրության իրավական ռեժիմի ապահովմանը մասնակցելը.

4) Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը մասնակցելը:

121. Ոստիկանության զորքերի առջև դրված խնդիրները հիմնականում համահունչ են «Ոստիկանության մասին» օրենքով նախատեսված խնդիրներին: Այդուհանդերձ, ի թիվս հիմնական ոստիկանական գործառույթների, ոստիկանության զորքերի առջև դրված է նաև Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը մասնակցելու խնդիր:

122. Այսպիսով՝ ոստիկանության զորքերին բնորոշ է արտաքին անվտանգության և իրավակարգի ապահովման պետական ֆունկցիաների (համապատասխանաբար արտաքին և ներքին) զուգակցումը, որը բացարձակ չի բխում Ոստիկանության առջև օրենքով դրված խնդիրներից: Ոստիկանության զորքերում ծառայություն անցնելու կարգը գտնվում է ռազմական ոլորտին առնչվող օրենսդրության տիրույթում, մասնավորապես, լինելով Ոստիկանության կառուցվածքային ստորաբաժանում, ծառայությունն իրականացվում է «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքին և դրանից բխող ենթաօրենսդրական ակտերին համապատասխան: Ըստ էության, ոստիկանության զորքերը զինված ուժերի մաս են և այս իմաստով՝ Ոստիկանության ռազմականացման հիմնական նախադրյալը:

123. Նկատի ունենալով ոստիկանության զորքերի հնարավորությունների օգտագործման առանձնահատկությունները՝ ընդունելի է համարվել, պահպանելով Ոստիկանության բարեփոխումների 2020-2022 թթ. ռազմավարության մոտեցումը, օրենքով այն նախատեսել որպես զուտ ոստիկանական ստորաբաժանում, որի կազմակերպման և գործունեության կարգն այլևս չի կարգավորվելու ռազմական ոլորտի օրենսդրական ակտերով:

124. Այս նպատակին հասնելու համար անհրաժեշտ էր ոստիկանության զորքերը դուրս բերել «այլ զորքերի» կարգավիճակից, ոստիկանության զորքերի կազմակերպման և գործունեության կարգը կանոնակարգել բացառապես ոստիկանությանն անմիջականորեն առնչվող օրենսդրական ակտերով, ուժը կորցրած ճանաչել «Ոստիկանության զորքերի մասին» օրենքը, ինչպես նաև մշակել լիովին նոր «Ոստիկանության գվարդիայի մասին» օրենք: «Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքը, որը 2024 թվականի հոկտեմբերին ամբողջության ընդունվեց ՀՀ Ազգային ժողովի կողմից, կհասցեագրի վերոնշյալ խնդիրները և կերաշխավորի լիազորությունների իրականացման նոր ստանդարտ:

125. Ուշագրավ է այն, որ «Ոստիկանության գվարդիայի մասին» և հարակից օրենքների նախագծերի փաթեթը մինչ ընդունվելը ներառական հանրային քննարկումների փուլ է անցել և միջազգային փորձագիտական դրական գնահատականի արժանացել: Օրենսդրական նախաձեռնությանը նախորդել են նաև հայեցակարգային լուծումների քննարկումները. 2023 թվականի ընթացքում մշակվել և հաստատվել է Ոստիկանության գվարդիայի ձևավորման հայեցակարգը: Հայեցակարգային մոտեցման համաձայն՝ Ոստիկանության գվարդիան ձևավորվելու է որպես լիարժեք նոր կառույց՝ չլինելով Ոստիկանության որևէ ստորաբաժանման իրավահաջորդը: Ոստիկանության գվարդիայի ձևավորմամբ դադարեցվելու է Ոստիկանության կառուցվածքում գործող ոստիկանության զորքերի, պետական պահպանության գլխավոր վարչության, ուղեկցող ստորաբաժանման, որոշ ստորաբաժանումներում գործող հատուկ նշանակության ստորաբաժանումների, ինչպես նաև քրեական վարույթում ներգրավված անձանց պաշտպանության ստորաբաժանումների գործունեությունը: Գործունեությունը դադարեցնող ստորաբաժանումների գործառույթները նորովի տեղափոխվելու են Ոստիկանության գվարդիայի տիրույթ: Միաժամանակ, արձանագրվել է, որ զորքերի կարգավիճակի փոփոխությունը չպետք է հանգեցնի նրա ծառայողների սոցիալական իրավունքների սահմանափակմանը կամ վատթարացմանը:

126. Ոստիկանության գվարդիան կունենա անմիջական ենթակայության տարածքային ստորաբաժանումներ առնվազն Հայաստանի Հանրապետության երեք մարզերում (Լոռի, Շիրակ, Սյունիք, որոնք անհրաժեշտության դեպքում կսպասարկեն նաև հարակից մարզերը), ինչպես նաև՝ պետական պահպանության և քրեական վարույթին ներգրավված անձանց պաշտպանության ստորաբաժանումներ (Երևանում և մարզերում):

127. Աշխարհագրական նման բաժանումը կօգնի Ոստիկանության գվարդիայի գործունեությունը սկսել ոլորտային բաշխման սխեմայով, այնուհետև ունենալ ճանապարհային քարտեզ՝ ոլորտային պատրաստվածությունից ունիվերսալ պատրաստվածության անցման, որը թույլ կտա ծառայողին ներգրավվել Ոստիկանության գվարդիային վերաբերող ցանկացած ֆունկցիայի սպասարկմանը:

128. Նոր մոդելի պայմաններում և արդեն իսկ ընդունված օրենքներով Ոստիկանության գվարդիային են վերապահել գործունեության հետևյալ ուղղությունները՝

1) հասարակական կարգի պահպանությունը և հասարակական անվտանգության ապահովումը.

2) Ոստիկանության կողմից պետական պահպանության ենթակա՝ պետական մարմինների և կազմակերպությունների շենքերի ու շինությունների, կարևորագույն նշանակության օբյեկտների, ինչպես նաև հատուկ բեռների տեղափոխման անվտանգության ապահովումը.

3) հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովմանն աջակցելը.

4) քրեական վարույթն իրականացնող մարմիններին օժանդակելը.

5) ռազմական դրության իրավական ռեժիմի և արտակարգ դրության իրավական ռեժիմի ապահովմանը, ինչպես նաև արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանությանը մասնակցելը:

129. Գործառութային նոր ներկայացվածությամբ Ոստիկանության գվարդիան չի ընդգրկվելու այլ զորքերի կազմում և պատերազմական իրավիճակում չի անցնելու զինված ուժերի ենթակայության տակ: Այդուհանդերձ, սա չի նշանակում, որ գվարդիան մեկուսացված է լինելու ՀՀ պաշտպանության գործառույթից. գվարդիան ունենալու է ՀՀ պաշտպանության գործառույթին աջակցության շատ ավելի թիրախային գործիքակազմ, որը թույլ կտա օգտակարության ավելի բարձր գործակից ապահովել: Խոսքը մասնավորապես վերաբերում է զինված ուժերի և այլ զորքերի ստորաբաժանումների, ռազմական և այլ տեխնիկայի, բնակչության զանգվածային տեղաշարժի երթուղիների պահպանություն և պաշտպանություն, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև նրանց ուղեկցում իրականացնելուն: Բացի այդ, որպես բացառիկ կանոն, սահմանվել է, որ անհրաժեշտության դեպքում Ոստիկանության գվարդիան ռազմական դրության հայտարարված տարածքում իրականացվող պատերազմական գործողությունների շրջանակներում կկատարի նաև հատուկ առաջադրանքներ, ինչը կդրսևորվի իր պատրաստվածությանը և գործիքակազմին համահունչ:

130. Զուգահեռաբար անհրաժեշտ է իրականացնել ներկայիս ոստիկանության զորքերի համապարփակ աուդիտ ու կարիքների գնահատում՝ հստակեցնելով ընդլայնված գործառույթներն իրականացնելու համար ծառայողների անհրաժեշտ օպտիմալ թիվը:

131. Միևնույն ժամանակ, հատկապես հասարակական կարգի պահպանությունն ու հասարակական անվտանգության ապահովումը պատշաճ իրականացնելու համար

անհրաժեշտ է նաև համապատասխան միավորներին զինել ժամանակակից տեխնիկայով ու սարքավորումներով, որոնց համընդգրկուն ու ժամանակակից ստանդարտներին համահունչ ցանկը կսահմանվի գնահատման արդյունքում:

8.2. Հասարակական կարգի պահպանություն

132. Հասարակական կարգի պահպանման ջոկատները ժամանակակից աշխարհում համարվում են ոստիկանության համակարգում լավագույնս կրթվածը՝ և՛ մարտավարական, և՛ հոգեբանական պատրաստվածության առումով:

133. Հաշվի առնելով, որ բազմության վերահսկողությունն ու հասարակական կարգի պահպանումը դարձել են առավելապես ոչ բռնի գործողություններ, այս կադրերի պատրաստման և վերապատրաստման հիմնական ուղղություններն ուղղակիորեն պայմանավորված են լինելու ոստիկանական այս կառույցի գործառույթներով և դրա ծառայողների լիազորությունների բովանդակությամբ: Ըստ այդմ, Ոստիկանության գվարդիայի ծառայողները պատրաստության և վերապատրաստման արդյունքներով, ի թիվս այլնի, պետք է տիրապետեն զանգվածային միջոցառումների ընթացքում քաղաքացիների հետ շփվելու էթիկական սկզբունքներին, հոգեբանական կապ հաստատելու և բանակցություններ վարելու հմտություններին, մարդու և քաղաքացու հիմնական, այդ թվում՝ հատկապես իրենց գործառույթների իրականացմանն անմիջականորեն առնչվող իրավունքների բովանդակությանը և դրանց իրավաչափ սահմանափակման հիմքերին, ուժային միջոցների կիրառման և սահմանափակումների վերաբերյալ եվրոպական սկզբունքներին և չափանիշներին, զանգվածային միջոցառումների ընթացքում հասարակական կարգի պատշաճ պահպանություն իրականացնելու մարտավարական հմտություններին, ուժի և հատուկ միջոցների համաչափ և արհեստավարժ կիրառման հմտություններին, անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով ձերբակալում, դրան ուղեկցող անձնական խուզարկություն կատարելու, ինչպես նաև համապատասխան արձանագրություններ կազմելու կարողություններին, դեպքի վայրի պահպանության ապահովման վարութային և կազմակերպական առանձնահատկություններին:

134. Կարևոր է, որ Ոստիկանության գվարդիայի ծառայողները հասարակական կարգի պահպանման ու հասարակական անվտանգության ապահովման շրջանակներում օրենքով նախատեսված հիմքերով իրավաչափորեն ուժային միջոցներ գործադրելու հնարավորություն ունենան միայն համապատասխան պատրաստություն անցնելուց հետո:

8.3. Օբյեկտների պետական պահպանություն

135. Գվարդիայի գործառույթներից մեկը լինելու է պետական պահպանության ենթակա օբյեկտների պահպանության ապահովումը: Այդուհանդերձ, պետք է նկատել, որ պետական պահպանության ենթակա օբյեկտների ցանկը հաստատվել է դեռևս 2004

թվականին, ինչն արդեն իսկ վկայում է դրա արդիականացման կարիքի մասին, ընդ որում՝ 20 տարվա կտրվածքով այն ենթարկվել է այնպիսի փոփոխությունների, որոնք ձևախեղել են ոստիկանական ուժերով պետական պահպանության նպատակը:

136. Այսօր պետական պահպանությունն ընկալվում է ոստիկանի ներկայություն տվյալ օբյեկտում, անցագրային ռեժիմի կազմակերպում, ինչը բնականաբար ցանկալի երևույթ է օբյեկտների համար: Բայց ժամանակակից աշխարհը ոստիկանի աշխատանքը գնահատում է հավուր պատշաճի և ոստիկանական ռեսուրս թողնում է միայն այն օբյեկտներում, որոնք իրապես անհրաժեշտ է պահպանել ոստիկանական ուժով: Սա բնավ չի նշանակում, որ ցանկի վերանայման արդյունքում ցանկից դուրս եկող օբյեկտները կարևոր օբյեկտներ չեն կամ դրանց դերին ու նշանակությանը պատշաճ գնահատական չի տրվում, սա նշանակում է, որ տվյալ օբյեկտը չի բավարարել ոստիկանական ուժով պետական պահպանության ենթակա լինելու սահմանված ստանդարտին, ուստի պահպանության անհրաժեշտության դեպքում այն պետք է ապահովել մասնավոր պահնորդական կազմակերպությունների կամ նման ծավալի բացակայության դեպքում՝ տեխնիկական միջոցների կամ տվյալ օբյեկտի հաստիքային միավորի միջոցով: Միաժամանակ, մասնավոր պահնորդական կազմակերպությունների կողմից նման օբյեկտների պատշաճ պահպանությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ կլինի վերանայել «Մասնավոր պահնորդական գործունեության մասին» օրենքի կարգավորումները, դրանք համապատասխանեցնել միջազգային չափանիշներին՝ լավարկելով պահնորդական գործունեության չափանիշներն ու լիցենզավորման պահանջները:

9. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԶԳԱՅՈՒՆ ՀԱՐՑԵՐ

137. Որպես իրավախախտների հետ շփման պետության առաջին օղակ՝ Ոստիկանությունում պետք է բարելավել քրեաիրավական ու վարչաիրավական կարգով ներգրավվող անձանց իրավունքների պաշտպանության մեխանիզմները, մասնավորապես՝ խոսքը խոշտանգումների կանխարգելման միջոցառումների[4], ձերբակալվածների կամ վարչական ձերբակալության ենթարկված անձանց իրենց հասկանալի լեզվով իրավունքների մասին գրավոր ծանուցումների, ձերբակալվածների պահման վայրերում բժշկական ծառայությունների ապահովման, ինչպես նաև ոստիկանության տարբեր ծառայությունների կողմից անձնական տվյալների պաշտպանության հարցերի (ներառյալ՝ շտեմարանների վարման, տեղեկությունների փոխանցման և պահպանման տեսանկյունից) մասին է:

[4] Առավել մանրամասն գործողություններ նախատեսված են «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022 թթ. և 2023-2025 թթ. Գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2019 թ. դեկտեմբերի 26-ի N 1978-L որոշմամբ:

9.1. Խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի կանխարգելում

138. Ազատությունից զրկված անձանց խոշտանգումներից պաշտպանելու, ինչպես նաև նման դեպքերը կանխելու և բացահայտելու նպատակով սահմանվել են միջազգային իրավական չափորոշիչներ:

139. Հիմնական փաստաթուղթը Ստամբուլի արձանագրությունն է, որը պաշտոնապես հաստատվել է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի կողմից 1999 թ. օգոստոսի 9-ին: Այն սահմանում է միջազգային չափանիշներ, թե ինչպես պետք է իրականացվի խոշտանգումների կամ վատ վերաբերմունքի այլ ձևերի վերաբերյալ մեղադրանքների իրավական և բժշկա-իրավական քննությունը:

140. Այն նաև ուղեցույցներ է տրամադրում խոշտանգումներից տուժածների բժշկական զննության և բացահայտումների մասին իրավասու մարմիններին հաղորդելու համար: Ինչպես ընդգծված է Ստամբուլի արձանագրության կիրառման վերաբերյալ համապատասխան ձեռնարկում, այս փաստաթուղթը պարունակում է մի շարք սկզբունքներ, որոնք «սահմանում են պետության նվազագույն չափանիշները»՝ ապահովելու ոչ միայն արդյունավետ քննությունը, այլև խոշտանգումների և վատ վերաբերմունքի փաստագրումը:

141. Վատ վերաբերմունքի նշանների փաստագրման և հաղորդման առաջնային մարտահրավերներից մեկը ստանդարտացված և նպատակային կանոնակարգերի բացակայությունն է: Եթե կանոնակարգերի որակը նվազագույն է, կամ կանոնները ճշգրիտ չեն կամ բացակայում են, առաջանում է մարտահրավեր, եթե ոչ խնդիր՝ պահանջելու համապատասխան փաստագրում և հաղորդում: Հետևաբար, Ոստիկանության համապատասխան ծառայակիցները և բժշկական մասնագետները կարող են չհամապատասխանել բարձր չափանիշներին, կարող են թերանալ և նույնիսկ չարաշահել իրենց լիազորությունները: Բացի այդ, բժշկական զննության, փաստագրման և հաղորդման ոչ ստանդարտ ընթացակարգերը կարող են հանգեցնել խախտումների կամ կամայականության: Տարբեր հաստատություններում (Ոստիկանություն և Շտապօգնություն) արձանագրության փոփոխականությունը կարող է հանգեցնել տեղեկատվության կամ տվյալների բացերի: Ավելին, որակյալ օրենսդրությունը նաև երաշխիք է Ոստիկանության համար, քանի որ սահմանափակվում են իրենց իրավունքները չարաշահողների և ոստիկանական ծառայողների նկատմամբ կեղծ մեղադրանք ներկայացնողների հնարավորությունները: Որակավորված փաստաթղթերի բացակայությունը կարող է ներքաշել այդ ծառայակիցներին երկարատև քննության մեջ և թեև, ի վերջո, նրանք կարող են արդարացվել, սակայն նման գործընթացները հանգեցնում են նվիրյալ ծառայակիցների ապամոտիվացմանը:

142. Այս մարտահրավերը կարող է հանգեցնել անբավարար վերահսկողության և ձախողումների, ինչն իր հերթին կհանգեցնի մարդու իրավունքների համակարգային խախտումների: Իհարկե, Ոստիկանության որակավորված ծառայակիցները ու մասնագետների առկայությունը կարող է ծառայել որպես մարդու իրավունքների ոտնահարման

դեմ երաշխիք, սակայն հավասարապես կարևոր են խոշտանգումները զսպող ու բացառող համակարգերը: Սա հատկապես ճիշտ է, երբ պրոֆեսիոնալիզմի բարձր մակարդակը միշտ չէ, որ կարող է պահպանվել, հաճախ տարբեր գործոնների, այդ թվում՝ օբյեկտիվ սահմանափակումների պատճառով:

143. Մեկ այլ մարտահրավեր է ոչ պատշաճ հաղորդումը: Զոհերը կամ վկաները կարող են տատանվել հաղորդել մի քանի պատճառներով, ներառյալ՝ բացասական հետևանքների վախը, հաշվեհարդար տեսնելու մտահոգությունը կամ վստահության բացակայությունը: Պատասխանատվությունը կիսել չցանկանալը կարող է լինել ոչ պատշաճ հաղորդման ևս մեկ պատճառ: Ոստիկանության կողմից վատ վերաբերմունքի դեպքերը բացահայտելու խնդիր է նաև կեղծ հաղորդումը և մակերեսային հաղորդումը: Մարդու իրավունքների պաշտպանի ուսումնասիրած օրինակներից մեկը ցույց է տալիս, որ կան ռիսկեր, որ Ոստիկանության կողմից բռնությունների որոշ դրսևորումների մասին կարող է սխալ կամ մակերեսային կերպով հաղորդվել:

144. Բժշկական անձնակազմի և իրավապահ մարմինների անձնակազմի ոչ բավարար պատրաստվածությունը փաստագրման և հաղորդման պատշաճ ընթացակարգերի վերաբերյալ կարող է հանգեցնել անճշտությունների: Մասնագիտական որակների անբավարարությունը վտանգում է ժամանակին և մանրակրկիտ փաստագրումը:

145. Միևնույն ժամանակ, սահմանափակ ռեսուրսները, ինչպես մարդկային, այնպես էլ տեխնոլոգիական, ևս մեկ մարտահրավեր են, որին բախվել է Ոստիկանությունը: Չնայած փաստագրման և հաղորդման մեջ ներգրավվելու և աջակցելու պատրաստակամությանը, Շտապ բժշկական օգնության ծառայությունը յուրաքանչյուր դեպքի համար բավարար մարդկային ռեսուրսների և ժամանակի պակաս ունի, ինչը կարող է հանգեցնել ոչ միայն ուշացումների, այլև ոչ լիարժեք հաղորդումների: Սա ավելի մեծ խնդիր է մարզային ծառայություններում:

146. Վատ վերաբերմունքի կանխարգելման նպատակով անհրաժեշտ է ձեռնարկել համալիր միջոցառումներ, որոնք կնպաստեն առերևույթ վատ վերաբերմունքի բոլոր դեպքերի վերհանմանը:

147. Այս համատեքստում կարևոր է նշել, որ Եվրոպայի խորհրդի խոշտանգումների դեմ պայքարի կոմիտեն (CPT) 2023 թվականի սեպտեմբերի 12-ից 22-ը Հայաստան կատարած այցի շրջանակներում ևս դիտարկել է Ոստիկանությունում առկա իրավիճակը: Կոմիտեն մի շարք ուղղություններով դրական արձանագրումներ է արել: Պատվիրակության կողմից անցկացված հարցազրույցների մեծ մասի ընթացքում ՁՊՎ-ներում պահվող անձինք նշել են, որ Ոստիկանության աշխատակիցներն իրենց հետ պատշաճ են վերաբերվել: Անդրադառնալով վատ վերաբերմունքի դեմ պայքարի իրավական երաշխիքներին՝ պատվիրակությունը նշել է, որ իրավիճակը, ընդհանուր առմամբ, բարելավվել է 2019 թ. կատարած պարբերական այցի համեմատ: Միևնույն ժամանակ դրական է գնահատվել 2021 թ. ընդունված Քրեական դատավարության օրենսգրքի կիրառումը: Կոմիտեն նաև մատնանշել է ֆիզիկական վատ վերաբերմունքի, ձերբակալման ընթացքում անհամաչափ

ֆիզիկական ուժի կիրառման և մի քանի այլ մասնավոր դեպքերի առկայությունը: Կոմիտեն ընդգծել է, որ «ոչ պաշտոնական զրույցների» պրակտիկան մեծամասամբ վերացել է: Դրական է գնահատվել այն հանգամանքը, որ Ոստիկանության ՁՊՎ բերման ենթարկվելուց հետո ձերբակալված անձինք բժշկի կողմից զննության են ենթարկվում, և արձանագրվում են հնարավոր բոլոր վնասվածքները: Կոմիտեն նաև դրական է գնահատել այն հանգամանքը, որ գործերի քննության ընթացքում բոլոր հարցաքննությունները տեսաձայնագրվում են, իսկ պարեկային ծառայողներն իրենց ծառայության ընթացքում կրում և մշտապես կիրառում են տեսաձայնագրող սարքեր: Կոմիտեն արձանագրել է նաև Ոստիկանության այլ ստորաբաժանումների ծառայողների կողմից տեսաձայնագրող սարքերի կրման կարևորությունը: ՁՊՎ-ների շենքային պայմանների վերաբերյալ արձանագրվել է, որ դրանք ներկա փուլում ընդհանուր առմամբ բավարարում են սահմանված չափորոշիչներին:

9.2. Ընտանեկան և կենցաղային բռնության, ինչպես նաև երեխաների նկատմամբ բռնության դեմ պայքար

148. Ընտանեկան և կենցաղային բռնության, ինչպես նաև երեխաների նկատմամբ բռնության դեմ պայքարի գործում անկյունաքարային նշանակություն ունեն Ոստիկանության գործառույթները, որոնց պատշաճ իրավական կարգավորումը Կառավարության առաջնահերթություններից է:

149. Չնայած «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման և ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենքի և դրա կիրարկմանն ուղղված շուրջ մեկ տասնյակ ենթաօրենսդրական ակտերի ընդունումից հետո արձանագրված կարևոր առաջընթացին՝ ընտանեկան և կենցաղային բռնության դեմ պայքարի բնագավառում միջգերատեսչական արդյունավետ համագործակցությունը պահանջում է լրացուցիչ ջանքեր:

150. Օրենքի գործնական կիրառության արդյունքներով հընթացս իրականացվել են մի շարք օրենսդրական փոփոխություններ, որոնք նպատակ ունեն ավելի ճշգրտելու ընտանեկան բռնության ենթարկված անձանց շրջանակը՝ նրանց ապահովելով առավել արդյունավետ պաշտպանությամբ, կատարելագործելու պաշտպանության առկա գործիքակազմերը՝ ելնելով պրակտիկ կիրառման վերլուծություններից, միջազգային առաջադեմ փորձից: Նախատեսվել է անհետաձգելի և պաշտպանական որոշումների կիրառման մշտադիտարկումը նաև էլեկտրոնային հսկողության միջոցների կիրառմամբ ապահովելու հնարավորություն, ինչը մի կողմից կբացառի բռնության ենթարկված անձանց վախերով պայմանավորված կայացված որոշումների խախտման դեպքերում ահազանգը Ոստիկանություն չփոխանցելու դեպքերը, մյուս դեպքում՝ կապահովի թվային լուծումներով որոշումների կիրառման մշտադիտարկման առավել արդյունավետ մշտադիտարկումը՝ դյուրացնելով խախտման փաստի արձանագրումն ու ապացուցումը:

151. Այս համատեքստում առանձնակի ուշադրության է արժանի այն, որ Կառավարության կողմից մշակվել է Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2024-2028 թվականների ռազմավարական ծրագրի նախագիծը: Փաստաթղթով նախատեսված են միջոցառումներ, որոնք միտված են կանանց և աղջիկների նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելմանը, հաղթահարմանը, բռնության ենթարկված կանանց և աղջիկների պաշտպանությունն ու աջակցությանը:

152. Երեխաների նկատմամբ բռնության դեմ պայքարի ուղղությամբ Կառավարության քաղաքականությունն արտացոլվել է նաև Երեխայի իրավունքների պաշտպանության 2024-2029 թվականների համալիր ծրագրի նախագծով, որը սահմանում է երեխաների առևանգման, սեռական բռնության, բուլինգի և երեխաների նկատմամբ բռնության այլ դրսևորումների դեմ համակարգային պայքարի իրականացմանն ու առկա գործիքակազմի կատարելագործմանն ուղղված միջոցառումներ:

153. Այս ոլորտներում Կառավարության համապարփակ քաղաքականությունն արտացոլող նոր փաստաթղթերին համահունչ՝ Ներքին գործերի նախարարությունը ձեռնարկելու է բռնության կանխարգելմանը, կանանց ու աղջիկների պաշտպանությանն ուղղված համալիր քայլեր: Անհրաժեշտ է ապահովել այդ քայլերի իրագործումը, գործառույթներն իրականացնել ապացուցահեն մեթոդներով, զարգացնել անձնակազմի կարողությունները, միջգերատեսչական համագործակցությունը:

154. Միաժամանակ, կանանց և երեխաների նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարում Ոստիկանության գործունեությանն առնչվող իրավական դաշտի ու գործնական կարողությունների զարգացման անհրաժեշտությունը պահանջում է առավել հասցեական գործողությունների ձեռնարկում սույն ռազմավարության շրջանակներում:

155. Ընտանեկան բռնության ենթարկված անձինք և բռնության ենթարկված երեխաները հատկապես խոցելի են կրկնազոհացման տեսանկյունից, ուստի նրանց հետ հաղորդակցությունն առանձնահատուկ մոտեցումների կարիք ունի, որոնք թույլ կտան վստահություն ձևավորել ոստիկանի և բռնության ենթարկված անձի միջև, բացառել վերջինիս մեղադրող, նրա զգացմունքները կամ փորձն արժեզրկող արտահայտությունների կիրառումը: Բացի այդ, կարևոր է նաև ոստիկանների կողմից դեպքի պատշաճ արձանագրումն ու ընտանեկան բռնության ենթարկված անձանց անվտանգության ապահովումը, հատկապես՝ կապված ապաստարան տեղափոխելու ընթացքում անվտանգության ապահովման հետ: Այս կարիքների հասցեագրումը ենթադրում է զոհակենտրոն և գենդերազգայուն մոտեցումներ ապահովող հաղորդակցության, ներառյալ՝ բռնության ենթարկված երեխաների հետ հաղորդակցության վերաբերյալ ուղեցույցների մշակում, Ոստիկանության ծառայողների վերապատրաստման մոդուլների վերանայում, ինչպես նաև ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց հետ աշխատելու

անվտանգային արձանագրությունների և ստանդարտ գործառնական ընթացակարգերի մշակում:

9.3. Անձնական տվյալների պաշտպանություն

156. Տվյալների, այդ թվում՝ անձնական տվյալների հավաքագրումն ու օգտագործումը կամ այլ կերպ մշակումը իրավապահ մարմինների գործունեության շրջանակներում չափազանց կարևոր են հանրային անվտանգության ապահովման, հանցագործությունների կանխարգելման և հասարակական կարգի պահպանության համար: Հանցագործությունների և այլ իրավախախտումների կանխարգելումն ու բացահայտումը, այդ թվում՝ անձնական տվյալների հավաքագրման և օգտագործման միջոցով, կարող են արդյունավետ կերպով իրականացվել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքով և մարդու իրավունքների պաշտպանության միջազգային սկզբունքներով սահմանված անձնական տվյալների պաշտպանության երաշխիքների պահպանմամբ: Ցանկացած անձնական տվյալի մշակում պետք է հետապնդի իրավաչափ նպատակ և համապատասխանի համաչափության սկզբունքին: Սա ենթադրում է, որ Ոստիկանությունում անձնական տվյալների մշակումը պետք է ուղղված լինի օրենքով սահմանված հստակ նպատակների իրագործմանը, ինչպես նաև այն պետք է լինի պիտանի, անհրաժեշտ և չափավոր այդ օրինական նպատակներին հասնելու համար:

157. Առկա ներպետական և միջազգային կարգավորումները նպատակ ունեն ապահովելու, որ Ոստիկանությունում անձնական տվյալները օգտագործելիս հավասարակշռություն պահպանվի հանրային շահի ապահովման հիմնական նպատակների և անձնական ու ընտանեկան կյանքի գաղտնիության և անձնական տվյալների պաշտպանություն իրավունքների միջև: Ոստիկանության տարբեր ստորաբաժանումներում տվյալների հավաքագրումը, դրանց ամփոփումը, պահպանումը, վերլուծությունը և օգտագործումը ամենօրյա գործառույթների մաս են, և առկա փորձի ուսումնասիրությունը փաստում է, որ անձնական տվյալների պաշտպանության պատշաճ իրականացումը միշտ համատեղվել է ոստիկանական գործառույթների իրականացման հետ: Միևնույն ժամանակ, հատկանշական է, որ տվյալների արդյունավետ պաշտպանության նոր մեթոդների ներդրումը և առկա երաշխիքների ամրապնդումը անհրաժեշտություն են Ոստիկանության հետագա գործունեության շրջանակներում՝ հատկապես հաշվի առնելով ժամանակակից աշխարհում առկա թվային մարտահրավերները, որոնց պայմաններում շարունակաբար բարդանում է անձնական տվյալների արդյունավետ պաշտպանությունը:

10. ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԵՐԱՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

158. Ոստիկանության ոլորտի բարեփոխումներն ուղղակի և անուղղակի փոխկապակցվածություն ունեն իրավապահ, դատական և այլ ոլորտների հետ, ինչի հետևանքով համապատասխան ոլորտների պատասխանատու մարմինների հետ համագործակցությունը, մասնակցությունն ու կոորդինացիան, ինչպես նաև ոլորտային զարգացման ծրագրերի հետ փոխգործելիության ապահովումը Ոստիկանության բարեփոխումների հաջողության գրավական են լինելու:

159. Ռազմավարության և դրանից բխող գործողությունների ծրագրի լիարժեք և արդյունավետ իրագործումն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ ստեղծվելու է Ոստիկանության բարեփոխումների համակարգող խորհուրդը (Խորհուրդ), որը ղեկավարվում է Վարչապետի կողմից և ներառում ոլորտը համակարգող փոխվարչապետին ու բոլոր շահագրգիռ պետական մարմիններին, Ազգային ժողովի պատգամավորների, քաղաքական ուժերի ու քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին:

160. Ռազմավարության և դրանից բխող գործողությունների ծրագրի իրականացումն ապահովելու նպատակով պատասխանատու մարմինները յուրաքանչյուր կիսամյակի ավարտից 5 աշխատանքային օրվա ընթացքում Խորհրդի քարտուղարություն ներկայացնում են հաշվետվություն: Խորհրդի քարտուղարությունը 2 աշխատանքային օրվա ընթացքում հաշվետվությունների փաթեթը ներկայացնում է Խորհրդին և հրապարակում ինտերնետային իր պաշտոնական կայքում: Կիսամյակային հաշվետվությունների հիման վրա Խորհուրդը մինչև հաջորդ տարվա հունվարի 31-ն ընդունում է ռազմավարության և դրանից բխող գործողությունների ծրագրի կատարման տարեկան հաշվետվություն:

161. Ռազմավարության և դրանից բխող գործողությունների ծրագրի ընթացքի մշտադիտարկումը և գնահատման գործառույթներն իրականացնում է Ներքին գործերի նախարարությունը (Խորհրդի քարտուղարություն), որը յուրաքանչյուր տարվա վերջում մշտադիտարկման ու գնահատման արդյունքները ներկայացնում է Խորհուրդ՝ հիմք ստեղծելով քաղաքական քննարկումներ մեկնարկելու ռազմավարության և դրանից բխող գործողությունների ծրագրի ընթացքի վերաբերյալ:

162. Առավել համապարփակ ու բազմակողմանի գնահատում ունենալու նպատակով քաղաքացիական հասարակության կազմակերպություններն առնվազն յուրաքանչյուր կիսամյակ կարող են իրականացնել անկախ մշտադիտարկում ու գնահատում և դրանց արդյունքները ներկայացնել Խորհուրդ:

163. Խորհուրդը յուրաքանչյուր տարվա վերջում՝ Խորհրդի քարտուղարության կողմից տարեկան ամփոփ հաշվետվությունը ստանալուց ու վերլուծելուց հետո, համապատասխան պատասխանատու մարմինների ներգրավմամբ կարող է մշակել առաջարկներ, որոնք Խորհրդի քարտուղարությունը ներկայացնում է ՀՀ կառավարություն՝ վերանայելու ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագիրը և կատարելու

մշտադիտարկման արդյունքների և առաջարկությունների վրա հիմնված համապատասխան փոփոխություններ:

164. Ռազմավարության և դրանից բխող գործողությունների ծրագրի ազդեցության գնահատման նպատակով Խորհուրդը միջնաժամկետ ու երկարաժամկետ փուլերում տարբեր թիրախային խմբերում կարող է նախաձեռնել հանրային կարծիքի հարցումներ, որոնց անցկացման հիման վրա չափվում է բարեփոխումների ազդեցությունը հասարակության վրա: Միջնաժամկետ փուլում իրականացված հարցումների արդյունքների գնահատման ու վերլուծության արդյունքում Խորհուրդը կարող է նախաձեռնել ռազմավարության և դրանից բխող գործողությունների ծրագրի, ինչպես նաև իրականացման մեթոդների ու մեխանիզմների վերանայման ու փոփոխությունների նոր շրջափուլ:

165. Սույն ռազմավարության 163-րդ և 164-րդ կետերով նախատեսված դեպքերում ռազմավարության մեջ և դրանից բխող գործողությունների ծրագրում փոփոխությունների նախագծերի մշակումն իրականացնում է Խորհրդի քարտուղարությունը:

166. Գործընթացի նկատմամբ առավել թափանցիկություն ապահովելու նպատակով ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագիրն առանձին բաժինների տեսքով տեղադրվում են Ներքին գործերի նախարարության պաշտոնական կայքէջում: Կայքէջում տեղադրվում են նաև Խորհրդի տարեկան հաշվետվությունները, որոնք հրապարակմանը զուգահեռ Խորհրդի քարտուղարության կողմից հասանելի են դարձվում բոլոր շահագրգիռ կողմերին, այդ թվում՝ Ազգային ժողովին:

167. Զուգահեռաբար, անհրաժեշտ է պահպանել և ապահովել Ոստիկանության բարեփոխումները համակարգող աշխատանքային խմբի գործունեությունը, որը ներառում է նաև Ոստիկանության բարեփոխումների իրականացմանն աջակցող միջազգային գործընկեր կառույցներին, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին և ավելի ինտենսիվ է զբաղվում ռազմավարության և դրանից բխող գործողությունների ծրագրի իրականացմամբ ու դրա մշտադիտարկմամբ:

11. ՀԱՆՐԱՅԻՆ ԸՆԿԱԼՈՒՄ, ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

168. Ոստիկանության բարեփոխումների 2020-2022 թվականների ռազմավարությամբ նախատեսվում էր բարեփոխումների հենց սկզբնական փուլից սկսած լավ մշակված ռազմավարական հաղորդակցության հետևողական իրականացումը՝ հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ բարեփոխումների արդյունքները սերտ կապված են և ուղղված են հանրային ընկալումների փոփոխությանը:

169. Ոստիկանության ու հասարակության միջև վստահելի փոխգործակցությունը Ոստիկանության գործունեության կարևորագույն ուղղություններից է: Այն ներառում է հանրության հետ արդյունավետ շփում, վստահության և արժանահավատության մթնոլորտի ամրապնդում, ինչպես նաև ոստիկանության նկատմամբ դրական ընկալման ձևավորում: Հանրության հետ արդյունավետ և կառուցողական հաղորդակցության անհրաժեշտության

մեկ այլ կարևոր հիմնավորումը Ոստիկանությունում նոր կադրերի ներգրավման, ծառայության գրավչության ավելացման և վերջնարդյունքում Ոստիկանության նկատմամբ հարգանքի բարձրացումն է:

170. Այդ իսկ պատճառով Ոստիկանության բարեփոխումների 2020-2022 թվականների ռազմավարությամբ նախատեսված ծրագրերի շրջանակներում հատուկ կարևորություն է տրվել հանրության հետ հաղորդակցության ընթացքում բարեփոխումների անհրաժեշտությունը, դրանց ընթացքը և նախատեսված արդյունքները մատչելիորեն ներկայացնելուն: Բարեփոխումների իրականացման ընթացքում կարևորվել է Ազգային ժողովի, պետական այլ մարմինների, քաղաքացիական հասարակության և մասնագիտական շրջանակների, միջազգային գործընկերների ու հասարակության այլ խմբերի հետ հաղորդակցության հաստատումը և շարունակական երկխոսությունը, ինչի արդյունքում երաշխավորվել է բարեփոխումների ներառականությունը:

171. Հասարակության հետ հաղորդակցության ոլորտում ձեռքբերումների մասին են փաստում մի շարք հանրային կարծիքի և վստահության հարցումների արդյունքում Ոստիկանության արձանագրած բարձր ցուցանիշները: Մասնավորապես՝ Միջազգային հանրապետական ինստիտուտի (IRI) Հարցումների հետազոտության կենտրոնի նախաձեռնությամբ կատարված Հանրային կարծիքի ուսումնասիրությանը նվիրված հետազոտության արդյունքներով Հայաստանի Հանրապետության պետական կառույցների աշխատանքի նկատմամբ գոհունակության ցուցանիշով Ոստիկանությունը բարելավել է իր դիրքերը՝ իրավապահ համակարգի մարմիններից շարունակելով մնալ առաջինը: Ընդհանուր առմամբ գոհունակության ցուցանիշը կազմել է 62 տոկոս՝ նախորդ տարի արված հետազոտության արդյունքների համեմատ աճելով 4 տոկոսով: Իսկ ԵԱՀԿ-ի կողմից պատվիրակված «Ոստիկանության և Ոստիկանության բարեփոխումների հանրային ընկալումը» հարցման արդյունքներով պարզվել է, որ հարցվողների 72 տոկոսը վստահում է Ոստիկանությանը կամ ունի չեզոք դիրքորոշում: 45 տոկոս լիովին վստահության ցուցանիշով Ոստիկանությունն իրավապահ կառույցներից շարունակում է մնալ առաջինը: Իհարկե, Ոստիկանության նկատմամբ հանրային վստահության ավելի բարձր ցուցանիշը հանդիսանում է նպատակ ՆԳ նախարարության համար և ոլորտում իրականացվող բոլոր ծրագրերը, ի թիվս այլ լավարկումների, ուղղված են լինելու նաև հանրային վստահության ամրապնդմանը:

172. Նշվածը գալիս է փաստելու, որ որևէ ոլորտային բարեփոխման հաջողությունը, բացի թիրախավորված իրական փոփոխությունների հաջող իրականացումից, մեծապես կապված է արտաքին և ներքին արդյունավետ հաղորդակցության հետ: Այս առումով Ոստիկանության բարեփոխումների համար շարունակում է կարևոր մնալ պատշաճ հանրային հաղորդակցության իրականացումը նախատեսվող փոփոխությունների մասին՝ միաժամանակ փոփոխելով հաղորդակցության նախկին ոճը:

173. Նկատի ունենալով ոլորտային այս ռազմավարության ընդգրկուն և հավակնոտ բնույթը, ինչպես նաև այն, որ դրա վերջնարդյունքը կապված է հանրային ընկալումների փոփոխության հետ՝ դեռևս բարեփոխումների մշակման փուլից սկսած լավ մշակված ռազմավարական հաղորդակցության հետևողական իրականացումը դառնում է առաջնահերթություն:

174. Ռազմավարական հաղորդակցության անհրաժեշտության մեկ այլ կարևոր հիմնավորումը Ոստիկանությունում նոր կադրերի ներգրավման, ծառայության գրավչության ավելացման և վերջնարդյունքում ոստիկանության նկատմամբ հանրային վստահության ու հարգանքի բարձրացումն է:

175. Հաղորդակցության կարևոր ուղղություններից պետք է լինի ոչ միայն իրազեկման հետ կապված աշխատանքների իրականացումը, այլև նման միջոցներով ոստիկանի կերպարի հանրային ընկալման փոփոխությունը: Սա հատկապես վերաբերում է կին ոստիկանների ընկալման փոփոխությանը և նրանց վերաբերյալ կարծրատիպերի կոտրմանը, որոնք խոչընդոտում են բանիմաց կին աշխատակիցների ներգրավմանը և նրանց առաջխաղացմանը Ոստիկանության համակարգում: Ոստիկանի ընկալման և Ոստիկանության վերաբերյալ հանրային մտածելակերպի փոփոխությունը միանշանակ դրական ազդեցություն կունենա Ոստիկանության մարդկային ռեսուրսների համակարգի, ինչպես նաև տարբեր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների և ընդհանրապես հասարակության հետ Ոստիկանության կողմից արդյունավետ համագործակցության հաստատման վրա: Նախկինում այդ ուղղությամբ կատարված աշխատանքները արդեն իսկ տվել են իրենց պտուղները, մասնավորապես՝ Պարեկային ծառայության կազմում ընդգրկվելու համար դիմորդների, այդ թվում՝ կին դիմորդների, քանակը փաստում է այդ մասին: Սակայն նպատակադրված արդյունքներին հասնելու համար անհրաժեշտ է ավելի մեծ եռանդով և նոր ծրագրերով շարունակել ոլորտային բարեփոխումների իրականացումը:

176. Նկատի ունենալով, որ Նախարարության ստեղծումից հետո գրանցված հիմնական ձեռքբերումներից է Պարեկային ծառայության գործարկումը հանրապետության ողջ տարածքում՝ հատուկ ջանքեր են գործադրվել հենց այս ուղղությամբ հանրային հաղորդակցության և իրազեկման համար, ինչի վառ օրինակ է «Եղի՛ր ուժ մեր երկրի համար» տեղեկատվական արշավի անցկացումը: Հաջորդիվ մեծ ուշադրության է արժանացել նաև Քրեական ոստիկանության ստեղծման գործընթացի մեկնարկը, որի մանրամասները ներկայացվել են հանրությանը մի շարք հարթակների, տեղեկատվական միջոցառումների միջոցով՝ հանրության լայն շրջանակներին մասնակից դարձնելով ողջ գործընթացին և երաշխավորելով, որ վերջիններս հասկանում են իրականացվող բարեփոխումների բովանդակությունը:

177. Հաղորդակցության ընթացքում անհրաժեշտ է շարունակել մատչելիորեն ներկայացնել ռեֆորմի անհրաժեշտությունը, կարևորապես, թե ինչպես են այս փոփոխու-

թյուններն ազդելու մարդկանց կյանքի որակի վրա, որոնք են հիմնական փոփոխությունները և այն արդյունքները, որոնք նախատեսված են արձանագրել առաջիկա երեք տարիների ընթացքում: Բարեփոխումների իրականացման ընթացքում կարևոր է լինելու Ազգային ժողովի, քաղաքացիական հասարակության և մասնագիտական շրջանակների, միջազգային գործընկերների ու հատկապես երիտասարդության ներգրավումը:

178. Կարևոր է լինելու Ոստիկանության ներսում ղեկավարության կողմից իրականացվող հաղորդակցության ուղերձների և միջոցների պատշաճ մշակումն ու իրականացումը:

179. Գալով հաղորդակցության ոճի փոփոխության խնդրին, որպես վստահելի ու հաշվետու հանրային ծառայություն՝ անհրաժեշտ է բարելավել Ոստիկանության աշխատանքի թափանցիկությունը՝ առավել հաճախակի, պրոակտիվ ու մատչելի տեղեկությունների, հաշվետվությունների և ուսումնասիրությունների վերաբերյալ տեղեկատվության տարածման, պարբերական մեդիա բրիֆինգների և հասարակայնության հետ կապերի առավել նոր ու ժամանակակից միջոցների արդյունավետ օգտագործմամբ: Եթե Նախարարությունը, Ոստիկանությունը կարողանան հանրությանը պրոակտիվ կերպով (ոչ թե պոստ ֆակտում) տեղեկացնել հանրային հնչեղության հարցերի, իր ծառայության առանձնահատկությունների, խիզախություն և ծառայողական արժանիքներ դրսևորած ծառայողների (կարևորապես ոչ բարձրաստիճանների) վերաբերյալ պատմությունների ներկայացմամբ, ինչու ոչ՝ հումորային հաղորդաշարերի միջոցով Ոստիկանության ամենօրյա ծառայության մասին պատմելով, ապա առավել ընկալելի, ուստի և առավել մոտ կդառնան հանրությանը՝ դրանով իսկ երաշխավորելով ոլորտի բարեփոխումների վերջնարդյունքը: Այս առումով անհրաժեշտ է զարգացնել ՆԳՆ հասարակության հետ կապերի համար պատասխանատու նորաստեղծ ստորաբաժանման կարողությունները (այդ թվում՝ տեխնիկական), ինչպես նաև ստորաբաժանման անձնակազմի հմտությունները և գիտելիքները՝ ապահովելով հաղորդակցության հստակ ռազմավարության մշակումը և կիրառումը՝ դրանից բխող գործողությունների ծրագրով, որը կունենա նորարար և արդյունավետ գործիքակազմ և մեթոդներ:

12. ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

180. Ոստիկանության բարեփոխումների իրականացման հարցում Կառավարությունը մշտապես ունեցել է միջազգային գործընկերների լայնամասշտաբ աջակցությունը և իր բարեփոխումներն իրականացրել միջազգային լավագույն չափորոշիչներին համահունչ:

181. Ոստիկանության բարեփոխումների մեկնարկի առաջին իսկ օրվանից միջազգային գործընկերների գործուն աջակցությամբ իրականացվել է Պարեկային ծառայության ներդրման, օպերատիվ կառավարման կենտրոնի ստեղծման գործընթացը, ներառյալ միջազգային չափորոշիչներին ուսումնական դասընթացների կազմակերպումն ու անհրաժեշտ տեխնիկական միջոցների ձեռքբերումը, որոնց շրջանակներում ակտիվ

համագործակցություն է իրականացվել Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների ու միջազգային կազմակերպությունների հետ, մասնավորապես՝ ԱՄՆ դեսպանության, ԱՄՆ ՄԶԳ-ի, Հայաստանում ԵՄ պատվիրակության, ՄԱԿ գործակալությունների և ԵԱՀԿ-ի հետ: Գործուն աջակցություն է ցուցաբերել նաև Համաշխարհային բանկը:

182. Ներքին գործերի նախարարության ձևավորման գործընթացում և դրանից ի վեր Ոստիկանության բարեփոխումների աջակից միջազգային գործընկերների շարքը շարունակել է ընդլայնվել՝ ընդգրկելով Եվրոպայի խորհրդի, Շվեդիայի Միջազգային Զարգացման Գործակալության և այլ գործընկերներին:

183. Ժողովրդավարական հասարակարգին բնորոշ բարեփոխումների օրակարգի հիմքում դրված արժեհամակարգի՝ բոլոր կողմերի համար ընդունելի սկզբունքներն են, որ եղել են համագործակցության աննախադեպ մասշտաբների և ձևաչափի իրականացման հիմքը:

184. Ոստիկանության բարեփոխումների 2020-2022 թթ. ռազմավարության, Ներքին գործերի նախարարության ձևավորման և զարգացմանն ուղղված ռազմավարական ուղղությունների իրականացման ողջ ընթացքը եղել է միջազգային գործընկերների ուշադրության ներքո և վերջիններիս հետ սերտ փոխգործակցությամբ: Ավելին, մի շարք միջոցառումներ իրականացվել են միջազգային գործընկերների հետ քննարկման, ամենօրյա հաղորդակցության, փորձի փոխանակման, ինչպես նաև տրամադրված աջակցության արդյունքներով:

185. Ձևավորվել է Ոստիկանության բարեփոխումները համակարգող աշխատանքային խումբ, որի կազմում ներգրավված են եղել նաև Ոստիկանության բարեփոխումներին աջակցող միջազգային գործընկերները, ինչը թույլ է տվել ներսից տեսնել Ոստիկանության բարեփոխումների օրակարգի իրացման հարցում ներդրվող ջանքն ու հետևողականությունը, մասնակցել քննարկումներին, օժանդակել տարբեր երկրների հաջողված պատմությունների և քաղած դասերի հաշվառմամբ լուծումների մշակմանը, ինչը բացառիկ դրական օրինակ է:

186. Ոստիկանության բարեփոխումների իրականացման ընթացքը ներկայացնելու և միջազգային բոլոր գործընկերների ավելի ակտիվ ներգրավվածությունն ապահովելու նպատակով Ներքին գործերի նախարարության կողմից մշակվել է համապարփակ մատրիքս, որը ներկայացնում է կատարված քայլերն ու այն ուղղությունները, որտեղ դեռևս անելիքներ կան: Միջազգային գործընկերների հետ համագործակցության համակարգումն առանցքային է բարեփոխումների միասնականության ու կրկնությունից զերծ թիրախային աջակցության ապահովման տեսանկյունից, ուստի համակարգման հարթակը մեծ ներուժ ունի. այն անհրաժեշտ է զարգացնել ու հետևողականորեն շարունակել աշխատանքները: Այդ ներուժի վկայությունն է այն, որ ոստիկանության բարեփոխումների օրակարգը կիսող և աջակցության պատրաստ միջազգային գործընկերների թիվն օրեցօր ավելանում է:

187. Բնականաբար բարեփոխումների օրակարգի մաս են կազմում Ոստիկանության ամենօրյա գործունեության մեջ միջազգային համագործակցության ամրապնդումն ու նորանոր հնարավորությունների դիտարկումը: Միջազգային համագործակցությունը Ոստիկանության ոլորտում ենթադրում է տարբեր երկրների իրավապահ մարմինների կայուն փոխգործակցություն անդրազգային հանցավորության, ահաբեկչության և գլոբալ անվտանգության այլ մարտահրավերների դեմ պայքարում: Այս համագործակցությունը ենթադրում է հետախուզական տվյալների և տեղեկատվության փոխանակում, համատեղ հետաքննությունների անցկացում, գործողությունների համակարգում և քրեական վարույթների շրջանակում փոխադարձ օգնության տրամադրում:

188. Իրավապահ մարմինների արդյունավետ միջազգային համագործակցությունը կարևոր է անդրսահմանային հանցագործությունների դեմ պայքարի համար և նպաստում է ոստիկանական ուժերի միջև լավագույն փորձի, փորձագիտական գիտելիքների և ռեսուրսների փոխանակմանը, ինչը հանգեցնում է առաջացող սպառնալիքներին առավել արդյունավետ և համակարգված արձագանքի:

189. Այս համատեքստում անհրաժեշտ է անդրադառնալ ինչպես Ոստիկանության գործող կառուցակարգերի շրջանակներում արդեն իսկ առկա համագործակցությանը միջազգային կազմակերպությունների ու կառույցների հետ, այնպես էլ այն նախաձեռնություններին, որոնք հնարավորություն կտան ընդլայնելու փոխգործակցության շրջանակն ու նախանշելու համագործակցության նոր ուղղություններ:

190. Այս գործընկերությունները թույլ են տալիս իրավապահ մարմիններին անխափան աշխատել սահմանների երկայնքով՝ օգտագործելով միմյանց ուժեղ կողմերն ու փորձը՝ գլոբալ անվտանգությունն ամրապնդելու և օրենքի գերակայությունը պահպանելու համար:

191. ՀՀ-ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի իրականացումը և ընդհանրապես ԵՄ և ԵՄ անդամ պետությունների հետ համագործակցությունը կարևոր նշանակություն ունեն փորձի փոխանակման և մասնավորապես կազմակերպված հանցավորության դեմ արդյունավետ պայքար իրականացնելու համար:

192. Այս համատեքստում կարևոր է ընդգծել Ոստիկանության սերտ համագործակցությունը ԵՄ «Եվրաջասթ» և «Եվրոպոլ» գործակալությունների հետ: Մասնավորապես 2024 թ. ապրիլի 5-ին ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև Հայաստանի Հանրապետության քրեական վարույթներով իրավական համագործակցության ոլորտում իրավասու մարմինների և Եվրոպական միության քրեական արդարադատության ոլորտում համագործակցության գործակալության (Եվրաջասթ) միջև համագործակցության մասին» համաձայնագիրը, որն ամրապնդում և ինստիտուցիոնալ հիմքերի վրա է դնում համագործակցությունը Եվրաջասթի հետ: Այս համաձայնագիրն անփոխարինելի դեր կունենա Հայաստանի և Եվրոպական միության իրավասու մարմինների միջև ոլորտային համագործակցության խթանման հարցում, որի նպատակն է նպաստել փոխադարձ իրավական օգնությանը, համատեղ հետաքննության

ռազմավարությունների մշակմանը և արդարադատական հարցերի հասցեագրմանն աջակցելուն:

193. Ներքին գործերի նախարարության կողմից ԵՄ «Եվրոպոլ» գործակալության հետ ևս համագործակցության ինստիտուցիոնալացմանն ուղղված փաստաթղթեր են ստորագրվել և արդեն իսկ վավերացվել: «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության և Եվրոպական միության իրավապահ ոլորտում համագործակցության գործակալության միջև փոխգործակցության մասին» համաձայնագրի վավերացումը հիմք է հանդիսանում հայաստանյան իրավապահ համակարգը ներկայացնող, Ներքին գործերի նախարարության կապի սպայի Եվրոպոլ տեղակայման համար, ինչի շնորհիվ Եվրոպոլի հետ համագործակցությունը և տեղեկատվության փոխանակումը կդառնա առավել օպերատիվ, իսկ «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության և Եվրոպական միության իրավապահ ոլորտում համագործակցության գործակալության միջև անվտանգ կապուղու մասին» փոխըմբռնման հուշագիրն իրավական հիմք կհանդիսանա Եվրոպոլի կողմից Ներքին գործերի նախարարությունում համապատասխան սարքավորումների տեղադրմամբ տեղեկատվության փոխանակման համար անվտանգ կապուղու ստեղծման համար:

194. Կարևորվում է նաև ոստիկանական կրթության ոլորտում ԵՄ-ի հետ համագործակցությունը: Սերտ համագործակցություն է ձևավորվել Եվրոպական ոստիկանական քոլեջի (CEPOL) հետ, որտեղ Ոստիկանության ծառայողները տարբեր թեմաներով վերապատրաստումների են մասնակցում, փորձի փոխանակում իրականացնում, մասնակցում աշխատաժողովների:

195. Առանձնապես կարևորվում է ԱՄՆ Դաշնային հետաքննությունների բյուրոյի, նահանգային իրավապահ և ոստիկանական կառույցների և հատկապես ԱՄՆ Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության գրասենյակի հետ համագործակցության խորացումը: Ամենօրյա ռեժիմով համագործակցությունն արդյունքներ է գրանցում թե՛ ամերիկյան, թե՛ հայկական կողմի համար:

196. Թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարը, կիբեռհանցավորությունը, անօրինական միգրացիան և կազմակերպված հանցավորության այլ դրսևորումները թեմաներ են, որոնց առնչությամբ վերջին տարիներին Հայաստանը հատկապես խորացրել է համագործակցությունն ԱՄՆ-ի հետ:

197. 2023 թվականի հուլիսի 7-ին Հայաստանի Հանրապետության անունից Ներքին գործերի նախարարությունը միացել է ԱՄՆ նախաձեռնած Սինթետիկ թմրամիջոցների սպառնալիքներին ուղղված համաշխարհային Կոալիցիային: 2024 թվականի մայիսի 24-ին Ոստիկանությունը և ԱՄՆ արդարադատության դեպարտամենտի թմրամիջոցների դեմ պայքարի վարչությունը ստորագրել են համագործակցության հուշագիր, որով ոլորտում հնարավորություն կստեղծվի իրականացնել տեղեկատվության փոխանակում, կազմակերպել համատեղ քննարկումներ, զարգացնել անձնակազմի մասնագիտական հմտությունները և առավել արդյունավետ պայքար մղել թմրամիջոցների դեմ:

198. Մերօրյա մարտահրավերներից մեկի՝ կիբեռհանցավորության դեմ պայքարի հարցում կարևորվում է կոնվենցիոն տարբեր գործիքակազմերի կիրառումը: Եվրոպայի խորհրդի Կիբեռհանցագործությունների մասին կոնվենցիայի շրջանակում (Բուդապեշտի կոնվենցիա) գործող 24/7 կոնտակտային կետերի սերտ համագործակցությունն էական է:

199. Հայաստանն արդեն իսկ ստորագրել է Բուդապեշտի կոնվենցիայի երկրորդ լրացուցիչ արձանագրությունը, ուստի դրա վավերացումը նոր գործիքակազմեր կարող է ապահովել կիբեռհանցավորության դեմ թիրախային պայքարի շրջանակներում:

200. Հարկ է խորացնել երկկողմ և բազմակողմ համագործակցությունն այլ օտարերկրյա պետությունների, գործընկեր կառույցների և միջազգային կազմակերպություն-ների հետ: Անհրաժեշտ է շարունակել ինտենսիվ աշխատանքները թե՛ տարածաշրջանային, թե՛ համաշխարհային մակարդակներում: ԱՊՀ շրջանակներում առկա համագործակցությունը ևս նպաստում է ամենօրյա ոստիկանական աշխատանքում արդյունքների գրանցմանն ու համագործակցության արդի օրակարգերի ձևավորմանը, կնքվում են համագործակցության նոր հուշագրեր, համաձայնագրեր թե՛ ԱՊՀ շրջանակում, թե՛ առանձին երկրների հետ:

201. Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ բարեփոխումների՝ միջազգային չափո-րոշիչներին համահունչ լինելու տեսանկյունից կարևորվում է մարդու իրավունքների միջազգային մոնիթորինգային մարմինների կողմից Ոստիկանության վերաբերյալ ներկա-յացված առաջարկների ու հանձնարարականների պատշաճ հասցեագրումը: Առանձնակի ուշադրության են արժանի նաև միջազգային կոնվենցիոն մեխանիզմները և դրանց հետ աշխատանքը: Այդ կապակցությամբ Ոստիկանությունն իրականացրել է 2018-2023 թթ. մարդու իրավունքների միջազգային մոնիթորինգային մարմինների կողմից Ոստիկանու-թյան վերաբերյալ ներկայացված առաջարկների ու հանձնարարականների քարտե-զագրում:

202. Այս համատեքստում անհրաժեշտ է հետևողականորեն իրացնել միջազգային մոնիթորինգային մարմինների, ներառյալ ԵԽ ԳՐԵԿՈ, ԵԽ ԽԿԿ, ՄԱԿ ԽԿ-ի, ՄԱԿ Կանանց նկատմամբ խտրականության վերացման հարցերով կոմիտեի և այլ մեխանիզմների հանձնարարականները, լուծել տարբեր զեկույցներում բարձրացված խնդիրները:

13. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՍՑԵԱԳՐՈՒՄԸ

Ռիսկեր	Ռիսկի աստիճան (Բ/Մ/Ց)	Ռիսկերի նվազեցման միջոցներ
1. Միջոցառումների իրականացմանը խոչընդոտող ֆինանսական միջոցների բացակայություն/ոչ բավարար միջոցների տրամադրում	Բ	1.1 Յուրաքանչյուր գործողության իրականացման համար պատասխանատու պետական կառավարման համակարգի մարմինը պետք է գործողության իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների գնահատման հիման վրա ապահովի ֆինանսական միջոցների հատկացման նախատեսումն իր կողմից ներկայացվող բյուջետային հայտում, միջնաժամկետ ծախսերի ծրագրում կամ այլ աղբյուրներից: 1.2 Միջազգային գործընկերների հետ նախօրոք բանակցվող փաստաթղթերում հստակ նախանշել այն աջակցությունը, որը տրամադրվելու է ոլորտին՝ կապելով դրանք ռազմավարության ու դրանից բխող ԳԾ առանձին կետերի հետ:
2. Պետական մարմինների միջև ոչ բավարար համագործակցություն	Մ	2.1 Իրենց լիազորությունների շրջանակներում աջակցություն ցուցաբերել պատասխանատու մարմինների գործողությունների իրականացման հարցում
3. Լրացուցիչ/չպլանավորված աշխատանքների	Ց	3.1 Գործողությունների իրականացման ընթացքում

կատարման անհրաժեշտության առաջացման ռիսկեր		չպլանավորված աշխատանքների իրականացման անհրաժեշտության առաջացման դեպքում ձեռնարկել լրացուցիչ աշխատանքների ծավալի և պահանջվող ֆինանսավորման (առկայության դեպքում) գնահատում և արդյունքների մասին հայտնել Խորհրդի առաջիկա նիստում
4. Կազմակերպական մարտահրավերներ	Ց	4.1 Միջոցներ ձեռնարկել մարմնի կառուցվածքային ստորաբաժանում-ների միջև՝ գործողությունների իրականացման վերաբերյալ տվյալների փոխանակման համար
5. Քաղաքական կամքի բացակայություն	Ց	5.1 ՀՀ կառավարությունն ամբողջու-թյան հանձն է առել ու ունի լիարժեք քաղաքական կամք՝ իրականացնելու ոլորտի բարեփոխումներ:

14. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՄՓՈՓ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

203. Ռազմավարության ֆինանսավորման կարիքը կազմում է 25,977.0 մլն դրամ: Միջոցառումների ծրագրի ֆինանսավորման կարիքի գնահատականն ինդիկատիվ է: Այն կարող է ենթարկվել մինչև 5 տոկոս շեղման:

204. Ծրագրով նախատեսված է իրականացնել թվով 43 գործողություններ, որոնցից 8-ը ներառում են 30 ենթագործողություններ: Այսպիսով նախատեսված ընդամենը 65 գործողություններից և ենթագործողություններից (այսուհետ՝ գործողություններ) 26-ը լրացուցիչ ֆինանսավորման կարիք չունեն. դրանք կիրականացվեն գործող բյուջետային ծրագրերի շրջանակներում:

205. Պետական բյուջեն կհանդիսանա թվով 10 գործողությունների ֆինանսավորման աղբյուր: Այս 10 գործողություններին ուղղված ֆինանսական ռեսուրսները հաշվում են 23,001.0 մլն դրամ և կազմում են ընդամենը ռազմավարության իրականացման համար պահանջվող ծախսերի 88.5 տոկոսը:

206. Ծրագրի մնացած 29 գործողությունները կարող են ֆինանսավորվել օրենքով չարգելված այլ աղբյուրների հաշվին, մասնավորապես, այդպիսի աղբյուրներ են դիտարկվում դոնոր հանրույթի ռեսուրսները: Վերջիններիս նկատմամբ կարիքը գնահատվում է 2,976.0 մլն դրամ կամ ընդամենը ֆինանսավորման կարիքի 8.3 տոկոսը:

Աղյուսակ 1. Ոստիկանության բարեփոխումների իրականացման ռազմավարության 2024-2026 թվականների գործողությունների բաշխումն ըստ ֆինանսավորման աղբյուրների

	Գործողու-թյունների քանակ	Միջոցառումների ֆինանսավոր-ման կարիք, հազ. ՀՀ դրամ	Միջոցառումների ֆինանսավորման կշիռը Ծրագրի բյուջեում, տոկոս
Ընդամենը	65	25,976,994.7	100.0
Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	26	0.0	0.0
Պետական բյուջե	10	23,000,987.2	88.5
Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	29	2,976,007.5	11.5

207. Ռազմավարությամբ սահմանված ուղղությունների ֆինանսավորման տեսանկյունից ֆինանսական ռեսուրսների գերակշիռ մասը կամ 66.3 տոկոսը կուղղվի Ուղղություն 8-ով սահմանված միջոցառումների իրականացմանը, այն է՝ Ոստիկանության զորքերի վերափոխման և Ոստիկանության գվարդիայի ձևավորմանն ուղղված միջոցառումների իրականացմանը: Հաջորդում են Ուղղություն 7-ը (Համայնքային ոստիկանության վերաիմաստավորում)՝ 14.7 տոկոս մասնաբաժնով և Ուղղություն 6-ը (Քրեական ոստիկանության զարգացում, օպերատիվ աշխատանքի արդյունավետություն)՝ 11.3 տոկոս մասնաբաժնով:

Աղյուսակ 2. Ոստիկանության բարեփոխումների իրականացման ռազմավարության 2024-2026 թվականների գործողությունների ծրագրի ծախսերի բաշխումն ըստ ռազմավարական ուղղությունների, հազար դրամ

Ռազմավարական Ուղղություններ	Ֆինանսավորման կարիք, հազ. ՀՀ դրամ	Ֆինանսավորման կշիռը Ծրագրի բյուջեում, տոկոս
Ուղղություն 1	182,950.0	0.70
Ուղղություն 2	336,357.0	1.29
Ուղղություն 3	558,205.0	2.15
Ուղղություն 4	284,930.0	1.10
Ուղղություն 5	22,650.0	0.09
Ուղղություն 6	2,922,207.5	11.25
Ուղղություն 7	3,826,941.4	14.73
Ուղղություն 8	17,216,503.6	66.28
Ուղղություն 9	549,950.0	2.12
Ուղղություն 10	-	-
Ուղղություն 11	71,300.0	0.27
Ուղղություն 12	5,000.0	0.02
Ընդամենը	**25,976,994.5**	**100.00**

208. Ոստիկանության բարեփոխումների իրականացումն անշուշտ պահանջում է պետության և դոնոր հանրության համատեղ աշխատանք և ֆինանսական ներդրումներ: Նկատենք, որ պետական բյուջեից գործողությունների ծրագրի ֆինանսավորման համար կարիքը կազմում է անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների 88.5 տոկոսը: Այս ծախսերի գերակշիռ մասը նախատեսված է ուղղել Ոստիկանության գվարդիայի գործարկմանը:

209. Այլ աղբյուրներից ֆինանսավորման ակնկալիքը կազմում է ընդամենը ֆինանսավորման կարիքի մոտ 11.5 տոկոսը կամ 2,976.0 մլն դրամ, որը հիմնականում արդեն իսկ ներառված է դոնորների հետ համագործակցության սխեմաներում:

210. Գործողությունների ծրագրի իրականացման ֆինանսավորման տեսանկյունից ծանրաբեռնված է 2026 թվականը, երբ կպահանջվի ծախսել ընդամենը գործողությունների ծրագրի իրականացման բյուջեի 67.5 տոկոսը կամ 17,524.8 մլն դրամը:

Աղյուսակ 3. Ոստիկանության բարեփոխումների իրականացման ռազմավարության 2024-2026 թվականների գործողությունների ծրագրի ֆինանսական ամփոփ գնահատականն ըստ ֆինանսավորման աղբյուրների և տարիների, հազար դրամ

	Պետական բյուջե	**Օրենքով չարգելված այլ աղբյուրներ**	**Ընդամենը**	**Կշիռը ընդամենը Ծրագրի բյուջեում, տոկոս**
2024 թ.	-	841,343.50	841,343.50	3.2
2025 թ.	6,431,765.60	1,179,077.20	7,610,842.80	29.3
2026 թ.	16,569,221.60	955,586.80	17,524,808.40	67.5
Ընդամենը	**23,000,987.20**	**2,976,007.50**	**25,976,994.70**	**100.0**

Հաշվարկների հիմքում ընկած են որոշ ենթադրություններ և սահմանափակումներ՝

1) գնահատված են ռազմավարության իրականացման միայն լրացուցիչ ծախսերը, այսինքն՝ այն ծախսերը, որոնք, ի լրումն պետական մարմինների բյուջետային ծրագրերի շրջանակներում ֆինանսավորման, լրացուցիչ անհրաժեշտ են սահմանված ծրագրային գործողությունների իրականացման համար (լրացուցիչ վերապատրաստումներ, փորձագիտական աջակցություն, իրազեկման միջոցառումներ, հետազոտությունների և ուսումնասիրությունների իրականացում և այլն): Այն գործողությունները, որոնց իրականացումը լրացուցիչ ծախսեր չի պահանջում, և իրականացվում է կամ կարող է իրականացվել բյուջետային առկա ռեսուրսներով և գործող բյուջետային ծրագրերի շրջանակներում, գնահատման առարկա չեն.

2) ռազմավարության գործողությունների ծրագիրն ապահովում է առանձին գործողությունների և սահմանված արդյունքների լիարժեք նույնականացում, հետևաբար, ծախսերը գնահատվել են ըստ առանձին գործողությունների մակարդակում սահմանված արդյունքների.

3) փորձագիտական աշխատանքների կամ փորձագետների դասակարգում չի իրականացվել: Փորձագիտական ռեսուրսների ներգրավվածության հիմքում անալոգային հետազոտությունների միջին բեռնվածություններն են: Ծախսային հաշվարկները ներկայացվել են միջին օրական դրույքաչափերի հիման վրա, որոնց գնահատման հիմքում գործող մի շարք խորհրդատվական ծրագրերի փորձագետների վարձատրության փաստացի դրույքաչափեր են.

4) ուղեցույցների մշակման, հետազոտությունների իրականացման, վերապատրաստման նյութերի և օրենսդրական փաստաթղթերի, հայեցակարգերի և այլնի մշակման ծախսերը ներառված են փորձագիտական ծախսերում.

5) իրազեկման նյութերի մշակման, իրազեկման արշավների և հեռուստահաղորդաշարերի, հանրային քննարկումների կազմակերպման և այլ ուղղակի ծախսերը գնահատվել են՝ հիմք ընդունելով նույնատիպ ծառայությունների գործող գների վերաբերյալ հարցումների արդյունքները.

6) ոստիկանական անձնակազմի մասնագիտական կրթության և վերապատրաստման ծախսերը գերազանցապես իրականացվելու են գործող բյուջետային ծրագրերի շրջանակներում: Բյուջեից լրացուցիչ ռեսուրսներ կպահանջվեն միայն նոր նախաձեռնվող վերապատրաստումների մասով, որոնց դեպքում ծախսերը գնահատվել են՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ոստիկանության ուսումնական հաստատությունում մեկ սովորողի կամ վերապատրաստում անցնող ծառայողի ուսման ծախսերի ընդհանուր փոխհատուցման չափը՝ սահմանված Կառավարության 2020 թ. փետրվարի 6-ի N 107-Ն որոշմամբ.

7) ոչ բյուջետային աղբյուրներից ֆինանսավորվող լրացուցիչ մասնագիտական վերապատրաստումների ծախսերի հիմքում պետական տարբեր ուսուցման կենտրոնների ղեկավարների հետ հարցազրույցների արդյունքներն են և նրանց կողմից առաջարկված մեկ մասնակցի հաշվով օրական ծախսերի միջին գնահատականը: Խմբային գնահատականների հիմքում մեկ մասնակցի հաշվով նույն ծախսերն են՝ կախված խմբում ընդգրկված մասնակիցների թվաքանակից: Երկօրյա արտագնա դասընթացների հիմքում Երևանից դուրս հյուրանոցների կողմից մատուցվող համապատասխան ծառայությունների արժեքներն են (տարածքի վարձակալություն, գիշերակաց սնունդ և սուրճ, անհրաժեշտ նյութեր).

8) դրույքաչափերի հետագա հնարավոր փոփոխությունները, գնաճի կամ այլ գործոնների հնարավոր ազդեցությունները հաշվի չեն առնվել.

9) մի շարք գործողությունների մասով ծախսային գնահատումները կարող են պայմանական լինել՝ պայմանավորված իրականացման ընթացքում դրանց ծավալների և շահառուների շրջանակի հետագա հստակեցմամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

19.11.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ